ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ
Պատմական գիտությունների դոկտոր

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ 1918 Թ. ՕԳՈՍՏՈՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դրությունն ինչպես նախորդ ամիսներին, այնպես էլ օգոստոսին շարունակում էր մնալ ծայրահեղ ծանր եւ հուսահատական: «Հայաստանը, ավելի շուտ, գաղթականական կայան էր,- գրում էր Սիմոն Վրացյանը:- Ամբողջ երկրում շուրջ 450.000 գաղթական էր թափված, որից մոտ 40. 000-ը Երեւանում, շատերը՝ փողոցների եւ ավերակ շենքերի մեջ: Հաց չէր ճարվում...: Սարսափելի էր որբերի վիճակը... Մարդիկ մեռնում էին անմռունչ, հարյուրներով, հազարներով: Ժողովուրդը սպառվում էր վառվող մոմի պես...»[1]:

Այդ ծանր իրադրությունում Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակում էր ջանքեր գործադրել Բրեստի պայմանագիրը կյանքի կոչելու, սովահարության մատնված հարյուր-հազարավոր փախստականներին իրենց հայրենի բնակավայրերը վերադարձնելու եւ հանրապետության տնտեսաքաղաքական մեկուսացումը վերացնելու համար Գերմանիայի աջակցությունն ստանալու նպատակով: Օգոստոսի 2-ին Բեռլինում գտնվող հայկական պատվիրակությունը օգնության մի գրավոր խնդրագրի հետ գերմանական արտգործնախարարությանը ներկայացրեց քաղվածքներ Կոստանդնուպոլսում գտնվող հայկական պատվիրակությունից ստացված տեղեկագրերից, որոնք ահազանգում էին բազմահազար հայ փախստականների ծայրահեղ ծանր դրությունը եւ թուրքական զորամասերի ու թաթարական հրոսակների կողմից հայերի հանդեպ իրագործվող բռնությունների շարունակական աճը: Այդ քաղվածքներում ընդգրկված էր նաեւ հետեւյալ հատվածը Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանի՝ հուլիսի 20-ի նամակից. «Դուք այդտեղ չեք կարող պատկերացնել, թե ինչպիսի? ահռելի չափերի է հասել մեր ազգի փախուստը, եւ որքան սոսկալի է դրանից առաջ եկած թշվառությունը: Երեւանից մինչեւ Դիլիջան եւ Նոր Բայազեդ ճանապարհներին փախստականների մի ամբողջ ծով է: Թիֆլիսի եւ Վլադիկավկազի միջեւ գտնվող ռազմական ճանապարհը լեփ-լեցուն է փախչող հայերով: Ախալքալաքի 80 000 հայերը խռնված են Բակուրիանիի կիրճերում՝ մատնված օտար իշխանությունների պաշտոնական եւ ոչ պաշտոնական կամայականություններին: Ղարաքիլիսայի հովիտները լի են փախստականներով: Այնտեղ են գտնվում Կարսի եւ Ալեքսանդրապոլի շրջանների բոլոր հայ բնակիչները: Քաաշի եւ Բորչալուի թաթարները, ոգեւորված թուրքական զորամասերի ներկայությունից, նրանց անմարդկային կոտորածների են ենթարկել: Նրանք միայն Ղարաքիլիսայի շրջանում սպանել են 2.000 հայերի... հայ որբերը, որոնցով շատ վագոններ լի էին, իրենց ուսուցչուհիների հետ միասին սպանդի են ենթարկվել: Առհասարակ Ղարաքիլիսայից մինչեւ Թիֆլիս ձգվող երկաթուղագիծը մեր ազգի կառափնավայրն է դարձել: Փախստականների բազմությունը՝

1 **Ս. Վրացյան**, Հայաստանի հանրապետություն, Երեւան, 1993, էջ 199-200:

թվով կես միլիոնից ավելի, զրկանքների եւ թշվառության մեջ մահվան բաժին է դառնում ամեն օր ու ամեն ժամ: Եթե շատ շուտով մեր տարածքը մինչեւ Բրեստի [նշած] սահմանը չազատվի, մեր ժողովուրդը կորած է...»[2]:

Պատվիրակության կողմից ԱԳՆ ներկայացված մյուս քաղվածքը կատարված էր ՀՀ արտգործնախարար Ալեքսանդր Խատիսյանի՝ հուլիսի 23-ի նամակից: Այնտեղ նշված էր, որ թուրքական կառավարությունը փախստականների առնչությամբ ՀՀ կառավարության ուղարկած նոտային դեռ չէր պատասխանել չնայած խոստացել էր հարցը երեք օրում քննել: Նաեւ տեղեկացվում էր, որ թուրքական զորքերն իրենց շատ անվայելուչ էին պահում եւ հաճախ հենց իրենք էին Ղարաքիլիսայում, Լոռիում, Ախալքալաքում եւ այլ վայրերում հայերի կոտորածներ իրականացնում, որի հետեւանքով Լոռիից փախստականների զանգվածները լեռներով գնում էին Դիլիջան, իսկ այնտեղից Նոր Բայազետ ու Երեւան: Միաժամանակ նշվում էր, որ թուրքերը Ղազախից թաթարներին տեղափոխում էին Կարսի շրջանը փախուստի մեջ գտնվող հայերի բնակավայրերում վերաբնակեցնելու համար[3]:

Օգոստոսի 5-ին Բեռլինի հայկական պատվիրակության նախագահ Համո Օհանջանյանը գերմանական ԱԳՆ պետքարտուղարին ներկայացրեց եւս մի ընդարձակ ուղերձ, որտեղ դարձյալ ուշադրություն էր հրավիրվում հայության ծանր դրության վրա, եւ միաժամանակ կատարվում էին առաջարկներ, որոնց իրագործման դեպքում հայերը վերջնական կործանումից կփրկվեին: Ուղերձում վերստին մատնանշվում էր, որ հայ ժողովրդին համաշխարհային պատմության մեջ աննախադեպ փորձություններ վիճակվեցին, եւ Թուրքիայի մոտ 2 միլիոն հայերից կենդանի էին մնացել հազիվ կես միլիոնը: Ուղերձում Օսմանյան կայսրության հայերի բնաջնջման ընդհանուր սահմռկեցուցիչ պատկերի ներկայացումից հետո անդրադարձ էր կատարվում այն ծանր կացությանը, որում գտնվում էին Կովկասի հայերը: Նշվում էր, որ Բրեստի պայմանագրի ստորագրման ժամանակ հայերն ակնկալում էին, որ դրանով որոշակիորեն կհատուցվեին իրենց հանդեպ իրագործված ոճրագործությունները, եւ կբացառվեր արդեն տեղի ունեցած անլուր սարսափների որեւէ կրկնություն, մինչդեռ պայմանագիրը հայերից նրանց հայրենիքի մեծագույն մասը խլելով հանդերձ՝ չկասեցրեց թուրքերի հետագա առաջխաղացումը, որոնք գրավեցին նաեւ կովկասյան Հայաստանի կեսից ավելին, իսկ այդ տարածքների ավելի քան 600.000 հայերը բնաջնջումից փրկվելու համար փախստական էին դարձել՝ իրենց ունեցվածքը մատնելով թուրքական կողոպուտին: «Հայ փախստականների հոսքը եւ նրանց մեջ մահացությունը օրեցօր աճում են,- նշված էր ուղերձում,- հայերի սպանություններն ու կողոպուտը մեծ

2 Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919, էջ 417-418:

3 Անդ, էջ 418: Արտգործնախարարությանը հանձնված՝ թվով երրորդ քաղվածքը ներկայացնում էր Կոստանդնուպոլսում գտնվող հայկական պատվիրակության քարտուղար Քոչարյանի՝ հուլիսի 20-ի տեղեկությունն այն մասին, որ դեպի Բաքու եւ Երեւան երթեւեկությունը դեռ վերականգնված չէր: Հաստատված էր այն փաստը, որ Շիրակի դաշտավայրից բազմաթիվ հայեր կալանավորվել եւ ուղարկվել էին Թուրքիա: Թուրքերը Ելիզավետպոլում գտնվող հայերից խլել էին նրանց զենքը, իսկ Վլադիկավկազ տանող զինվորական ճանապարհը արգելափակված էր: Ավազակների հրոսակները շարունակում էին ավարառությունը Ախալքալաքի շրջանում, որի բնակչությունը դեռ վերադարձի հնարավորություն չուներ: Ավելի քան 600 000-ի հասնող փախստական հայերի մեջ իրենց հունձն էին կատարում սովը եւ համաճարակները: Միաժամանակ նշվում էր, որ հայերը Բաքվից հեռացնում էին իրենց ընտանիքները: Անդ:

չափերով աճում են: Մահմեդական բանդաները,՝ քաջալերված թուրքերի ներկայությունից, անարգել իրագործում են իրենց անկարգությունները: Մեր ժողովրդի վերջին մնացորդը, մի ազգի, որը հարյուրամյակներ ի վեր Ասիայի դարպասների մոտ ներկայացրել է քրիստոնեական կրոնն ու եւրոպական մշակույթը, դատապարտված է կործանման, եթե նրան շատ շուտով օգնություն չցուցաբերվի: Օգնել կարող է միայն Գերմանիան: Այն բանից հետո, երբ կովկասյան Հայաստանը հռչակել է իր պետական անկախությունը, նա օգնության ակնկալիքով եւ վստահությամբ լի դիմում է հզոր Գերմանիային եւ խնդրում է պաշտպանական միջամտություն՝ Թուրքիային Բրեստի պայմանագրի պայմանները հարգել տալու, այդ կերպ կովկասյան հայերին Թուրքիայի իրենց հայրենակիցներին վիճակված ճակատագրից փրկելու եւ նոր հայկական պետությանը գոյատեւման ու անարգել զարգացման հնարավորություն ընձեռելու համար»[4]:

Ուղերձում չորս կետերով ներկայացվում էին նաեւ այն միջոցառումները, որոնց շուտափույթ գործադրումը կհանգեցներ հարցի որոշակի կարգավորման: Նախ անհրաժեշտ էր համարվում զորամասեր ուղարկել Հայաստան՝ հայերին նոր հարձակումներից ու կոտորածներից պաշտպանելու, հայ փախստականներին իրենց հայրենի բնակավայրերը վերադարձնելու, ինչպես նաեւ թուրքերից հայկական տարածքների պատշաճ ազատումն ապահովելու եւ վերահսկելու համար: Այդ առնչությամբ երախտագիտորեն անդրադառնալով գերմանական ԱԳՆ այն տեղեկությանը, որ Գերմանիան թուրքական կողմին դրդել էր փախստականների վերադարձի դեմ իր մերժողական կեցվածքից հրաժարվել պատվիրակությունն ուղերձում միաժամանակ ընդգծում էր, որ հայերը ոչ մի կերպ չէին համաձայնի վերադառնալ թուրքական ազդեցության ոլորտ, քանի դեռ երաշխավորված չէր լինի նրանց անվտանգությունը: Քանի որ դա, ըստ ուղերձի հեղինակների, միայն գերմանական կամ ավստրո-հունգարական զորամասերի առկայության դեպքում կարող էր իրականություն դառնալ, նրանք թախանձագին խնդրում էին հնարավորինս շուտ զորամասեր ուղարկել՝ նշելով, որ յուրաքանչյուր օր «անչափելի արյան հեղում» եւ նմանապես «անչափելի ունեցվածքի կորուստ» էր նշանակում:

Ուղերձում մատնանշվող հաջորդ հրատապ միջոցառումը պետք է լիներ մայրաքաղաք Երեւանում գերմանական դիվանագիտական ներկայացուցչի նշանակումը, որի ներկայությունը թուրքական շրջաններում հայկական կողմի դիրքորոշումը շատ ազդեցիկ կդարձներ: Հանրապետության կառավարությունը խիստ ցանկալի էր համարում նաեւ գերմանական առեւտրական մի հանձնաժողովի կամ ներկայացուցչի առաքումը Հայաստան՝ հայտնելով իր պատրաստակամությունը Գերմանիային բամբակ եւ պղինձ մատակարարելու հարցում: Երրորդ կետում մատնանշվում էր հայկական տարածքներից թուրքական զորքերի դուրսբերման եւ Բրեստի պայմանագրով հաստատագրված սահմանների վերականգնման անհրաժեշտությունը եւ զուգահեռաբար տեղեկացվում էր, որ քանի դեռ թուրքերը գրաված էին պահում հայկական տարածքները, խոսք լինել չէր կարող անդորրի, կարգ ու կանոնի հաստատման, ինչպես եւ տնտեսական գործունեության ապահովության մասին, իսկ հայկական հանրապետությունը պետականության կառուցման ու ամրապնդման

4 Die Armenische Frage und der Genozid an den Armeniern. Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardges Mikaeljan, Jerewan 2004, p. 568:

իր առաջադրանքների կատարման համար համապատասխան ազատություն եւ հնարավորություններ չէր ունենա: Եւ վերջապես, թվարկվող միջոցառումների վերջին՝ չորրորդ կետում ընդգծվում էր Գերմանիայի կողմից ՀՀ պետական անկախության ճանաչման անհրաժեշտությունը, որն արդեն տեղ էր ունեցել Թուրքիայի կողմից[5]:

Նշված երկրորդ կետի՝ Երեւանում գերմանական ներկայացուցչի նշանակման առնչությամբ պատվիրակությունը օգոստոսի 6-ին գերմանական ԱԳՆ ներկայացրեց նաեւ մի առանձին խնդրագիր, որտեղ մասնավորապես նշվում էր, որ Հայաստանի կառավարությունն իր նստավայրը Երեւան փոխադրելուց հետո պատվիրակությանը հանձնարարել է խնդրել, որ Գերմանիան Երեւանում մի դիվանագիտական ներկայացուցիչ նշանակի, ինչպես այդ տեղի էր ունեցել Թիֆլիսում: Ընդգծվում էր, որ նրա ներկայությունը ոչ միայն թուրքերի մոտ հայկական կողմի դիրքորոշումը խիստ ազդեցիկ կդարձներ, այլեւ Գերմանիայի համար կդյուրացներ Հայաստանի իրադրության վերաբերյալ տեղեկատվության ստացումը, կնպաստեր երթեւեկության կանոնավորմանը եւ հումքի ձեռքբերմանը: Խնդրագրում վերստին հավաստվում էր, որ հանրապետության կառավարությունն արդեն իսկ ի վիճակի էր Գերմանիային ու նրա դաշնակիցներին բամբակ եւ պղինձ մատակարարել, եւ որ Կոստանդնուպոլսի հայկական պատվիրակությունն իր հերթին պատրաստակամություն էր հայտնել այնտեղի գերմանական դեսպանին այդ մասին ընդարձակ տեղեկություններ ու փաստաթղթեր տրամադրել, եթե պաշտոնական Գերմանիան նրան հրահանգավորեր զբաղվել այդ հարցով[6]:

Գերմանական թե՛ քաղաքական եւ թե՛ բարձրաստիճան զինվորական շրջաններն անշուշտ որոշակիորեն դեմ էին Կովկասում Թուրքիայի ինքնիշխան քաղաքականությանը եւ մյուս կողմից հասու էին այն բարդություններին, որոնք թուրքական կառավարության հայասպանդ քաղաքականության հետեւանքով կարող էին ի հայտ գալ ապագա խաղաղության բանակցություններում: Դեռ նախորդ ամիսներին գերմանական բանակային հրամանատարությունը, թուրքական կառավարությանը նախազգուշացնելով Կովկասում թուրքական զորքերի առաջխաղացման եւ թուրքական հայասպանդ քաղաքականության հնարավոր հետեւանքներից մասին կոչ էր անում ճանաչել Բրեստի պայմանագրով հաստատագրված սահմանները: Իսկ առանձին բարձրաստիճան զինվորականներ, զորօրինակ գեներալ Ֆոն Լոսովը, գեներալ ֆոն Կրեսը եւ այլք, հետեւողականորեն պաշտպանում էին Թուրքիայի վրա ազդու ճնշման միջոցով նրան Կովկասից դուրս մղելու տեսակետը: Թուրքական կողմն իր հերթին գործողություններն արդարացնելու համար որդեգրել էր զանազան սպահոդ «հիմնավորումներ»:

Գերմանական բանակի գլխավոր հրամանատար ֆելդմարշալ ֆոն Հինդենբուրգը, որը հուլիսի 30-ին Էնվերին դարձյալ մի հեռագիր էր ուղարկել՝ կոչ անելով փախստական հայերին անհապաղ վերադարձի հնարավորություն տալ, հուլիսի 31-ին գեներալ ֆոն Ջեկտի միջոցով եւս մի հեռագիր ուղարկեց նրան, որտեղ տեղեկացնում էր, որ Ջուլֆայի ուղղությամբ թուրքական դիվիզիաների տեղաշարժերի վերաբերյալ տեղեկություններով հաստատվում էր, որ այդ շրջաններում հայերի հետ մարտեր էին տեղի ունենում: «Ես մեծ քաղաքական եւ

5 Անդ, էջ 569:
6 Տես էջ 569-570:

նմանապես մեծ ռազմական սխալ կհամարեմ,- նշում էր նա,- եթե այդ մարտերը ռազմական տեսանկյունից անպայմանորեն անհրաժեշտ չափը գերազանցեն: Ռազմական տեսակետից նույնպես, մենք չենք կարող անտեսել այն մտահոգիչ տրամադրությունը, որն այդ մարտերի ընթացքում բնակիչների դեմ անկարգությունների հետեւանքով Անդրկովկասում ի հայտ կգա»[7]:

Շուտով օգոստոսի 3-ին Կոստանդնուպոլսի գերմանական դեսպան Բեռնշտորֆը Վինդենբուրգին ուղարկեց Էնվերի գրավոր պատասխանը: Վերջինս այնտեղ նշում էր, թե ինքը հայ փախստականների հարցով զբաղվող թուրքական արտաքին գործերի նախարարությանը տեղեկացրել էր, որ «ռազմական տեսանկյունից» կարող էր ընդունելի համարել փախստականների վերադարձը դեպի Ալեքսանդրապոլ-Զուլֆա երկաթգծից առնվազն 20 կմ հեռավորության վրա ընկած տարածքը, ինչպես նաեւ այն շրջանները, որտեղ մուսուլմանների եւ հայերի միջեւ մարտեր տեղի չէին ունեցել, ընդ որում հատկանշական է, որ նա այդ տարածքներից շեշտում էր մասնավորապես Բաթումի շրջանը: Այնուամենայնիվ, նշում էր Էնվերը, այդ մասին որոշում պետք է կայացներ 3-րդ բանակի գլխավոր հրամանատարը: Ինքն անձամբ դեռ չէր կարող նաեւ որոշակիորեն ասել՝ արտգործնախարարությունը փախստականներին վերադարձի համար համապատասխան թույլտվություն կհատկացներ, թե՝ ոչ, սակայն չէր թերանա հարցի կարգավորումն արագացնել եւ արդյունքների մասին տեղեկացնել ֆելդմարշալին:

Զուտ թուրքական այս պատասխանը համեմված էր նաեւ մի ամբողջ շարք ապակողմնորոշիչ տեղեկություններով, որոնցով ռազմական նախարարը փորձում էր «հիմնավորել» հայ փախստականների զանգվածային վերադարձի անհնարինությունը եւ թուրքական կողմի հակահայկական գործողությունները: «Ես,- գրում էր Էնվերը,- լիովին կիսելով Զերդ Գերազանցության մտահոգությունները եւ համակված Զերդ Գերազանցության ցանկություններն իրագործելու մեծ բաղձանքով՝ ի ցավ ինձ, ստիպողական ռազմական պատճառներով ի վիճակի չեմ թույլատրել հայերի վերադարձը ամբողջ ծավալով եւ առանց սահմանափակումների: Ես խնդրում եմ այդ հարցի քննության ժամանակ նկատի առնել հայերի հանդեպ մեր դրությունը: Բաքվի առջեւ, Զուլֆայի եւ Ուրմիայի մոտ նրանք մեր դեմ մարտեր են մղում: Նրանց կապը անգլիացիների հետ ապացուցելի է: Այս դեպքում ժողովրդի եւ ռազմական հակառակորդի միջեւ որեւէ սահմանազատում կատարելը հազիվ թե հնարավոր է՝ չնայած սկզբունքորեն բնակչության դեմ պատերազմ չմղելու մեր ողջ պատրաստակամությանը: Զերդ Գերազանցությունը ինձնից պահանջում է կես միլիոն մասամբ զինված եւ թշնաբար տրամադրված բնակիչներին թույլատրել անցնելու մեր կռվող բանակի թիկունքը, երբ որեւէ երաշխիք չի կարող տրվել, որ նրանք խաղաղ պահվածք կցուցաբերեն: Նրանք, այնուհանդերձ, ինչպես նախկինում ռուսական, այնպես էլ այժմ անգլիական վարձատրությամբ դծվարություններ կստեղծեն մեր պատերազմական գործողությունների համար: Վերադառնալով այն շրջանները, որոնք հարյուրամյակներ շարունակ տակնուվրա են եղել հին ազգային ատելությամբ, նրանք նոր արյունոտ կռիվների առիթ կստեղծեն: Զերդ Գերազանցությանը կխնդրեի նկատի առնել, որ վերջին մարդահամարից հետո միայն Կարսի շրջանում մուսուլման բնակիչների թիվը կրճատվել է 45. 000-ով, որոնք բոլորը

7 Deutschland und Armenien 1914-1918... էջ 416:

զոհ են դարձել հայերի հեգապնդումներին, քանի որ այդ շրջանում ռուսական զորակոչ տեղի չի ունեցել: Այդ շրջանների մուսուլմանական ժողովուրդը անխուսափելիորեն կձգտի վրեժխնդիր լինել, այնպես, որ թուրքական զորքերը ստիպված կլինեն հայերին պաշտպանելու համար հանդես գալ իրենց ազգակիցների ու հավատակիցների դեմ: Հենց ի սեր մարդկայնության անհրաժեշտ է խուսափել մի նոր քաղաքացիական պատերազմից, որ կունենա անխուսափելի դաժան հետեւանքներ: Հայերի վերադարձը կհարկադրի երկրի ներսում գնդերի վերաբաշխում կատարել: Դա անհնար կդարձնի ծրագրված ռազմական գործողությունները եւ կջլատի մեր պատերազմավարումը: Ձերդ Գերազանցությանը ես խնդրում եմ մեր դիրքորոշումը գնահատելիս այդ հանգամանքները արժեւորել: Եթե անմիջաբար կամ գեներալ ֆոն Կրեսի միջնորդությամբ պահանջվում է Բաքվից հայերի հեռանալը եւ նրանց վերադարձը հայկական պետության տարածք, ապա Ադրբեջանում ղեկավարող թուրքական հրամանատարի կողմից խոչընդոտներ չեն հարուցվի: Բաքվից նրանց հեռանալը մեզ համար միայն ցանկալի կարող է լինել, քանի որ այնտեղի ռուսների հետ համաձայնության հասնելը ավելի կհեշտանա, եթե այնտեղ նրանց վրա ակնհայտորեն տիրող ազդեցությունը դրան չխանգարի»[8]:

Էնվերի պատասխանը ընդարձակ մեկնաբանության կարիք չունի: Նա փորձում էր գործադրել հերյուրանքների մի ամբողջ զինանոց՝ հայերի առնչությամբ իր գերմանական դաշնակցի պահանջները չկատարելու եւ միաժամանակ նրա մոտ եւս հակահայկական տրամադրություն ձեւավորելու համար եւ չէր խուսափում մինչեւ իսկ Բաքվի ռուսների հետ փոխըմբռնման անհնարինությունը պայմանավորել նրանց վրա այնտեղ գտնվող հայերի ունեցած ազդեցությամբ: Իսկ առանձին շրջաններում հայերի վերադարձը թույլատրելու՝ Էնվերի երեւութային համաձայնությունը նպատակ ուներ այն պատրանքը ստեղծել, որ նա սկզբունքորեն դեմ չէր հայերի զանգվածային վերադարձին, սակայն դա պատերազմական իրադրության պայմաններում անհնար էր[9]: Մինչդեռ, ինչպես շուտով պարզ կդառնա, թուրքական կառավարության կողմից սկզբունքորեն արգելվում էր նաեւ վերոնշյալ առանձին շրջաններում հայերի վերադարձը:

Ինչեւէ, Բեռլինի հայկական պատվիրակությունը բնականաբար իր խնդիրն էր համարում նաեւ թուրքական այդ ապակողմնորոշիչ «փաստարկների» մերկացումն ու պարզաբանումը: Բացառապես այդ հարցին էր վերաբերում օգոստոսի 8-ին ԱԳՆ ներկայացված ուղերձը, որտեղ մասնավորապես նշվում էր, որ հայկական կառավարությունը երբեք չէր առաջարկել թուրքական զորք ուղարկել հայկական «բանդաների» դեմ պայքարելու համար, եւ որ այս հարցում խոսքը կարող էր վերաբերել միայն աննշան խմբերի, որոնք թուրքական զորքերի ներկայության անհրաժեշտություն ամենեւին չէին ստեղծում, եւ որոնց հետ կարող էին նաեւ հայկական կանոնավոր զինված ուժերը հաշիվ մաքրել, եթե նրանց տրվեր շարժման

8 Անդ, էջ 418-420:

9 Նրա այս հեռագիրը, սակայն, աներկբա լավատեսությամբ էր համակել գերմանական կողմին: Այդ է վկայում պետքարտուղար Հինթցեի՝ օգոստոսի 4-ին գեներալ ֆոն Կրեսին ուղարկած հաղորդագրությունը: Ըստ պետքարտուղարի հավաստիացման՝ թուրքական կառավարությունը գերմանական կառավարության եւ բանակի գլխավոր հրամանատարության կողմից «պաշտպանված բազմաթիվ քայլերի հիման վրա» պատրաստակամություն էր հայտնել անմիջապես ձեռնամուխ լինել հայ փախստականներին հայրենիք վերադարձնելու գործին: Հինթցեն նաեւ նշում էր, որ այդ հարցում ռազմական նկատառումներով մինչեւ կովկասյան հարցերին նվիրված համաժողովի հրավիրումը բացառություն էր կազմելու միայն Ախալքալաքի շրջանը: Անդ, էջ 420:

բավականաչափ ազատություն, եւ թուրքերի կողմից չարգելվեր հայկական երկաթուղու օգտագործումը: Նշելով, որ կառավարությունը Երեւան տեղափոխվելուց հետո անհամեմատ ավելի մեծ հնարավորություններ ուներ երկրում առանց օտարների օգնության պահպանելու կարգ ու կանոնը՝ պատվիրակությունը միաժամանակ ընդգծում էր բազմաթիվ փաստերի առկայությունն այն մասին, որ թուրքերը մահմեդական բանդաների դեմ ոչ միայն չէին պայքարում, այլեւ նրանց ամեն հնարավոր ձեւով աջակցում էին, մինչդեռ եթե մի քանի հարյուր մարդուց բաղկացած մի քանի գերմանական պարեկային խմբեր ուղարկվեին, ապա նրանք խաղաղությունը խաթարող քրիստոնյաների եւ մահմեդականների դեմ հավասարաչափ խստություն կիրառելով եւ զերծ լինելով թուրքերին հատուկ կողմնակալությունից՝ կարճ ժամանակում կկարողանային ողջ հայկական տարածքը մաքրել բանդաներից:

Ինչ վերաբերում էր Ուրմիայի շրջանին, ապա, ինչպես տեղեկացվում էր ուղերձում, մի շարք հայեր եւ ասորիներ պարսկական սահմանով փախել էին այնտեղ: Նրանք ի վիճակի չէին սպառնալու թուրքական զորքերի անվտանգությանը, նաեւ աջակցություն ստանալու անգլիացիներից, քանի որ վերջիններս հարյուրավոր կիլոմետրեր հեռու, Մոսուլի մոտ էին գտնվում: Միաժամանակ նշվում էր, որ Բաթումի բանակցությունների ժամանակ հայկական կողմը պատրաստակամություն էր հայտնել մի հանձնաժողով ուղարկել Ուրմիա՝ այնտեղի հայ փախստականներին Կովկաս բերելու համար, բայց թուրքերը ոչ հանձնաժողովին եւ ոչ էլ փախստականներին թույլ չէին տվել օգտագործել երկաթուղիները: Իսկ Բաքվի առնչությամբ տեղեկացվում էր, որ ռուսական արեւմտյան ճակատի լուծարումից հետո հայ զինվորները նույնպես վերադարձել էին հայրենիք: Նրանցից մոտ 5-6 հազարը ընտրել էին Բաքվով անցնող ճանապարհը, սակայն նրանց հետագա ուղին դեպի Թիֆլիս եւ Հայաստան դարձել էր անհնար, քանի որ թաթարները Բաքու-Թիֆլիս ճանապարհահատվածը գրավել էին եւ սպանում էին յուրաքանչյուր հայի, ով կկամենար այն հատել: Այդ իսկ պատճառով հայ զինվորները դարձյալ Բաքու էին վերադարձել եւ միացել բոլշեւիկներին, որոնք նրանց խոստացել էին օգնել վերադառնալու իրենց հայրենիք: Միաժամանակ ուղերձում նշվում էր, որ Բաքուն գտնվում էր բոլշեւիկների ձեռքում, եւ այնտեղի իրադարձությունների համար նրանք էին պատասխանատու, այլ ոչ թե հայերը եւ կամ Հայաստանի կառավարությունը, որը սեփական նախաձեռնությամբ արդեն երկու անձանց ուղարկել էր Բաքու՝ այնտեղ գտնվող հայ զինվորների վերադարձը կազմակերպելու համար, բայց նրանց թուրքերը ճանապարհին՝ Քուրդամիրի մոտ, չէին թույլատրել շարունակել ճանապարհը, եւ նրանք ձեռնունայն վերադարձել էին Թիֆլիս: Ուշագրավ էր նաեւ ուղերձում կատարված այն հավաստումը, որ բոլշեւիկների հետ հայերի համագործակցությունն անհամեմատ նվազ եւ աննշան չափեր կունենար, եթե հայ զինվորներին թույլատրվեր վերադառնալ հայրենիք[10]:

Հայաստանի կառավարությունը, փաստորեն, իր պատվիրակությունների միջոցով շարունակում էր գործադրել իր բոլոր հնարավորությունները՝ ծայրահեղ ծանր իրադրությունը հաղթահարելու համար գերմանական կառավարության աջակցությունը ստանալու նպատակով: Գերմանական արտգործնախարարությանը տրամադրվում էր մանրազնին ստույգ տեղեկատվություն տիրող իրադրության վերաբերյալ, կատարվում էին բավական հնարամիտ հիմնավորումներ գերմանական կողմին աջակցության դրդելու

10 Տես Die Armenische Frage..., էջ 570-572:

նպատակով: Միաժամանակ զգալի բացատրական աշխատանք էր տարվում գերմանական կառավարությանը թուրքական ապակողմնորոշիչ տեղեկատվության ազդեցությունից զերծ պահելու համար: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ այդ հարցում հայկական կողմը բացարձակապես միայնակ չէր եւ մասնավորապես ի դեմս Թիֆլիսում Գերմանիայի պաշտոնական ներկայացուցիչ գեներալ ֆոն Կրեսի, ուներ գործուն եւ եռանդուն աջակից:

Ֆոն Կրեսը հուլիսի 30-ին բարոն Ֆրանկենշտայնի եւ իր շտաբի մի շարք աշխատողների հետ միասին Թիֆլիսից Ալեքսանդրապոլով մեկնեց Երեւան, նաեւ Էջմիածին՝[11] հանդիպումներ ունենալով ինչպես կառավարության, այնպես էլ կաթողիկոսի հետ[12]: Նա եւ իր պատվիրակությունը նաեւ հրավեր ստացան մասնակցելու օգոստոսի 1-ին Երեւանում պառլամենտի բացման հանդիսավոր արարողությանը: Ֆոն Կրեսը, սակայն, նպատակահարմար գտավ հրաժարվել անձամբ այդ արարողությանը մասնակցելուց, քանի որ, չնայած հայերի համար Գերմանիայի օգնությունն ապահովելու՝ նրա գործադրած բոլոր հետեւողական ջանքերին, դրանք դեռ էական արդյունքներ չէին տվել, եւ նա իրավացիորեն այն մտավախությունն ուներ, որ իր մասնակցությունը հայերի մեջ անիրագործելի հույսեր կարթնացներ Գերմանիայի աջակցության վերաբերյալ: Բացի այդ, Ադրբեջանի եւ Վրաստանի միջեւ ստեղծված նոր լարվածությունը նույնպես նրան հարկադրում էր շուտափույթ վերադառնալ, ուստի նա եւ իր պատվիրակության անդամները, բացառությամբ բարոն Ֆրանկենշտայնի, որն այդ օրը արարողությանը մասնակցելու համար մնաց Երեւանում, հուլիսի 31-ի երեկոյան վերադարձան Թիֆլիս[13]:

Վերադարձից հետո, դեռ նախքան իր հիմնական տեղեկագրի պատրաստումը, գեներալը օգոստոսի 4-ին կանցլեր իշխան ֆոն Հերտլինգին ուղարկեց մի հեռագիր, որտեղ միանշանակորեն հերքելով փախստականների անվերապահ վերադարձի վերաբերյալ Էնվերի պատճառաբանությունները, միաժամանակ ընդգծում էր, իր այցելությունը, դիտարկումներն ու զրույցները կրկին փաստում էին, որ միայն կենտրոնական տերությունների

---

11 Ֆոն Կրեսը, ինչպես հաղորդվում էր նրա օգոստոսի 5-ի տեղեկագրում, Երեւան էր մեկնել Հայաստանի կառավարությանը ներկայանալու պաշտոնական նպատակով:

12 Էսադ փաշան իր նախնական հանձնառության համաձայն հոգ էր տարել, որ նրանք առանց որեւէ բարդության անցնեին թուրքերի գրաված տարածքով: Հուլիսի 30-ի երեկոյան, երբ նրանք հասան Երեւան, քաղաքագլխի կողմից հրավիրվեցին Ճաշի: Հաջորդ օրը առավոտյան հանդիպումներ ունեցան նախարարների եւ Ազգային խորհրդի նախագահի հետ, իսկ այնուհետեւ մեկնեցին Էջմիածին, որտեղ նրանց ընդունեց կաթողիկոսը: Կեսօրից փոքր-ինչ անց վարչապետն ու Ազգային խորհրդի նախագահը նրանց հետ բավական երկարատեւ գաղտնի զրույց ունեցան, նույն օրը երեկոյան նրանք, բացառությամբ բարոն Ֆրանկենշտայնի, վերադարձան Թիֆլիս: Տե՛ս Deutschland und Armenien 1914-1918..., էջ 423:

13 Տե՛ս Deutschland und Armenien 1914-1918..., էջ 423: «Ես չկարողացա Երեւանում իմ մնալը երկարաձգելու որոշում կայացնել,- գրում էր այդ առթիվ գեներալը,- քանի որ մի կողմից Ադրբեջանի եւ Վրաստանի միջեւ ներկայումս գոյություն ունեցող լարվածությունը շատ ցանկալի էր դարձնում իմ շուտափույթ վերադարձը Թիֆլիս, եւ մյուս կողմից, քանի որ ես երկյուղ էի կրում, որ պառլամենտի բացման կարեւոր միջոցառմանը իմ մասնակցությունը հայերի մոտ Գերմանիայի աջակցության՝ ոչ իրագործելի հույսեր կարթնացներ: Եթե ես նույնիսկ Բեռլինից վերադարձած հայ պատվիրակներից որոշ բաներ լսել եմ հայկական հարցի վերաբերյալ արտգործնախարարության դիրքորոշման մասին, սակայն այնքան քիչ իրազեկություն ունեմ գերմանական կառավարության մտադրությունների մասին, որ անհրաժեշտ համարեցի զգաստություն ցուցաբերել»: Անդ: Ինչ վերաբերում է բարոն Ֆրանկենշտայնին, ապա նա արարողությունից հետո վերադառնալով Թիֆլիս, այդ մասին մի զեկուցագիր պատրաստեց եւ այն օգոստոսի 4-ին ուղարկեց Ավստրո-Հունգարիայի արտգործնախարար իշխան Ստեֆան Բուրիանին: Անդ, էջ 421-422: Այն հանգամանքը, որ զեկուցագիրն ուղարկվեց ոչ թե գերմանական, այլ ավստրո-հունգարական կառավարությանը, ամենայն հավանականությամբ թելադրված էր այն հեռանկարով, որ Հայաստանի Հանրապետությունը կարող էր դառնալ Ավստրո-Հունգարիայի ազդեցության գոտի՝ սպանալով նրա պաշտպանությունը:

շուտափույթ օգնության դեպքում Հայաստանը կարող էր փրկվել կործանումից[14]: «Ներկայիս փոքրիկ Հայաստանը չի կարող մինչեւ իսկ իր տեղացի բնակչությանը կերակրել, ուր մնաց թե հիմա այնտեղ գտնվող երեքից հինգ հարյուր հազար փախստականներին»,- գրում էր գեներալը: Փախստականների ծանր դրությունը, կառավարության կամքին հակառակ, տեւականորեն հանգեցնում է բանդաների ձեւավորման եւ այդպիսով թուրքերի հետ նոր խառնակությունների: Հայաստանը թուրքերի կողմից ամբողջովին մեկուսացված է: Նրանք արգելում են ցանկացած առեւտուր եւ երթեւեկություն, թաթար եւ պարսիկ բնակչությանը դրդում են գաղթել, այնպես որ հայկական կառավարությունը երկյուղ է կրում, որ կհարձակվեն Երեւանի վրա: Թուրքերը նաեւ այստեղ չեն պահպանել Բաթումի խաղաղության պայմանագրի պայմանները եւ գրավված են պահում Բաթումի սահմանից այն կողմ գտնվող կարեւոր տարածքներ[15]: Հայաստանը կարող է կենսունակ դառնալ միայն Բրեստ-Լիտովսկի սահմաններով, առանց թուրքերի կողմից անցկացվող սահմանային ուղղումների, որոնց դեպքում Թուրքիային կհանձնվեն տնտեսապես հենց ամենակարեւոր շրջանները»:[16]

Ֆոն Կրեսը միաժամանակ ընդգծում էր, որ ներկայումս արտադրանք տալու ունակ շրջանները գրեթե ամբողջովին գրավված էին թուրքերի կողմից, որոնք մեծ քանակությամբ բամբակի պաշարներ էին արտահանում, ընդ որում բերքի մի մասը հավաքում էին թուրքերը, իսկ մյուս մասը ոչնչանում էր: Նա հույժ կարեւոր էր համարում, որ երկաթուղու՝ մինչեւ Նախիջեւան ձգվող հատվածը «անպայմանորեն» հանձնվեր հայերին, իսկ թուրքերին կարելի էր թույլատրել դրանով զինվորական ուժեր տեղափոխել, ինչպես դա տեղի էր ունենում Վրաստանում: Ինչ վերաբերում էր Էնվերի կողմից ներկայացված վերոնշյալ պատճառաբանությանը, որ եթե թուրքական զորքերը եւ քաշվեին դեպի Բաթումի սահմանը, ապա Հայաստանի եւ Վրաստանի միջեւ պատերազմ կծագեր, ֆոն Կրեսն իր հեռագրում դա միանշանակորեն հերքում էր: «Հայերը,- նշում էր գեներալը,- ինչպես ես, որոշակիորեն ժխտում են այն պնդումը, որ եթե թուրքերը քաշվեն դեպի Բաթումի սահմանները, երկու պետությունների միջեւ պատերազմ կբռնկվի: Էնվերի հակառակ պնդումը միայն պատրվակ է՝ պայմանագրին հակառակ գրավված երկրի ամբողջական ավերման ու կողոպտման նպատակով ժամանակ շահելու համար: Թուրքերը դարձյալ ուզում են Ադրբեջանից ներխուժել զուտ հայկական՝ Ղարաբաղի շրջանը եւ այն զինաթափել: Եթե մենք նրանց դա չարգելենք, ապա մահմեդականների դեմ ինքնապաշտպանվող լեռնաբնակների նոր կռիվներն անխուսափելի կդառնան...»[17]:

Հատկանշանական է նաեւ, որ գեներալը հեռագրում կանցլերին դարձյալ հիշեցնում էր Հայաստանը ավստրո-հունգարական շահերի ոլորտ դարձնելու եւ ավստրո-հունգարական պաշտպանությունը երաշխավորող պայմանագրի կնքման նպատակահարմարության մասին՝ հավաստիացնելով, որ հայերը դա կընդունեին[18]:

---

14 Էնվերի հեռագիրն ակնհայտորեն դեսպանի կամ Վինդենբուրգի կողմից ուղարկվել էր նաեւ նրան:

15 Բաթումի հաշտության պայմանագրի մասին տես Մ. Ս.,Կարապետյան, Հայաստանը 1912-1920 թվականներին, Երեւան, 2003, էջ 236-240:

16 Deutschland und Armenien 1914-1918..., էջ 420-421:

17 Անդ, էջ 421:

18 Ֆոն Կրեսն իր հեռագիրը միաժամանակ ուղարկեց նաեւ Վիեննա՝ ավստրիական արտգործնախարարություն:

Օգոստոսի 5-ին ֆոն Կրեսը պատվիրակության անունից կանցլերին ուղարկեց նաեւ իր բավականին ընդարձակ, ամբողջական տեղեկագիրը կատարված այցի, հանդիպումների եւ դիտարկումների արդյունքների մասին: Նա այնտեղ մասնավորապես նշում էր, որ իր պատվիրակությունը Հայաստանի կառավարության եւ բնակչության կողմից ջերմ ու համակրալից ընդունելություն էր ստացել, եւ համեմատած Թիֆլիսի, Երեւանում հայ սպաներն ու զինվորները շատ ավելի բարձր կարգապահություն էին ցուցաբերում: Դրական տպավորություն էր թողել նաեւ գլխավոր հրամանատար գեներալ Նազարբեկովը, որը, ինչպես նշում էր ֆոն Կրեսը, ռուսական բանակում մեծ համարում ունեցող գեներալ էր եղել[19]:

Ֆոն Կրեսը նաեւ ընդգծում էր, որ բոլշեւիզմը հայ ժողովրդի եւ հայ զինվորների մեջ շատ քիչ համակիրներ էր գտել: Ազգային ծանր դրության, հոգեւորականության մեծ ազդեցության, նաեւ կրթության՝ միջին հաշվով շատ ցածր մակարդակի հետեւանքով քաղաքական ու տնտեսական բնույթի հակասությունները մղվել էին հետին պլան: Կուսակցական տարաձայնությունները մշտապես հիմնականում վերաբերել են թուրքերի հանդեպ վարած քաղաքականությանը, ընդ որում եթե արմատական տարրերը այդ առումով ակտիվ եւ «ագրեսիվ» քաղաքականության կողմնակից էին, ապա փոքրամասնություն կազմող չափավորները հանդես էին գալիս Թուրքիայի հանդեպ սպասողական, ձգձգումների միտված քաղաքականության օգտին: Ըստ ֆոն Կրեսի, այդ վերջին ուղղությանն էին պատկանում նաեւ ներկա կառավարության անդամները: Վարչապետ Քաջազնունին, ՆԳ նախարար Արամ Մանուկյանը, ԱԳ նախարար Ալեքսանդր Խատիսյանը, Ռազմական նախարար գեներալ Հախվերդյանը եւ Ֆինանսների նախարար Խաչատուր Կարճիկյանը գեներալի վրա հմուտ քաղաքական գործիչների տպավորություն չէին թողել, բայց փոխարենը՝ հանդարտ, շրջահայաց եւ նպատակասլաց աշխատողների, որոնք վրացիներից տարբերվում էին այն բանով, որ «իրատեսական քաղաքականություն» էին վարում եւ ձեռնպահ էին մնում ամպագորոգոռ խոսքերից:

Գեներալի վրա խիստ մեծ տպավորություն էր գործել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե Սուրենյանցը, որն ըստ նրա, մի շատ պատկառելի այր էր՝ «իր բարձր դիրքի արժանավորության եւ իր վրա ծանրացող պատասխանատվության կշռին գիտակից, խելացի եւ նպատակասլաց, բանակցությունների ժամանակ գրեթե մերժող զգուշավորությամբ ու սառնությամբ, սեղանի մոտ՝ ամենաուշադիր եւ ամենասիրալիր տանտերը»[20]: Հանգամանալից ներկայացնելով կաթողիկոսի հետ իր եւ բարոն Ֆրանկենշտայնի զրույցն ու դրա դրամատիկ ընթացքը, որ պայմանավորված էր վանքի բակում կուտակված հազարավոր փախստականների ողբալից աղմուկով, ոչնչացման դատապարտված ժողովրդի թշվառ, անմխիթար դրության վերաբերյալ կաթողիկոսի կատարած պարզաբանումներով, ինչպես նաեւ հայերի հանդեպ թուրքերի կատարած ոճրագործությունների, այդ առնչությամբ Գերմանիայի՝ իբրեւ Թուրքիայի դաշնակցի ցուցաբերած դիրքորոշման շուրջ մտքերի

Տե՛ս Die Armenische Frage..., էջ 574:

19 Գեներալ Նազարբեկյանը՝ ի դեպ, ֆոն Կրեսի հետ զրույցում դժգոհություն էր հայտնել իր ենթակայության տակ գտնվող 20 000-անոց բանակի ներուժի վերաբերյալ, որտեղ չնայած սպաներ շատ կային, բայց նրանք մեծ մասամբ պատերազմի ժամանակ էին սպա դարձել եւ չունեին ոչ գիտելիքներ եւ ոչ էլ փորձառություն. մի խնդիր, որը, ինչպես նշում էր ֆոն Կրեսը, նույնությամբ առկա էր նաեւ Վրաստանում:

20 Deutschland und Armenien 1914-1918..., p. 423-424:

փոխանակությամբ, գեներալն այնուհետեւ ներկայացնում էր այն ծանր իրավիճակը, որում գտնվում էր Հայաստանի Հանրապետությունը: Հայերը, ինչպես շարադրում էր ֆոն Կրեսը, թուրքերի կողմից օղակված էին մի շատ փոքրիկ տարածքում, որը, բացառությամբ Երեւանի, ամբողջովին բարձր լեռնային գոտի էր եւ գրեթե ամբողջովին անբերրի : Թուրքերը ինչպես վրացիների, այնպես էլ հայերի հանդեպ չէին պահպանել իրենց իսկ կողմից թելադրված Բաթումի խաղաղության պայմանագրի որոշումները եւ իրենց գծած սահմաններից այն կողմ զավթել էին մի շարք տարածքներ, որոնց կորուստը Հայաստանի համար առանձնապես ցավալի էր, քանի որ այդպիսով նրանից խլվել էին արտադրության ունակ վերջին շրջանները: «Ներկայումս թուրքերն ըստ երեւույթին Ադրբեջանից շարժվում են 90 տոկոսով հայերով բնակեցված Ղարաբաղի գավառը եւ ուզում են այնտեղի բնակչությանը զինաթափել այն պատրվակով, թե այնտեղ հայերը վերջերս մուսուլմանների դեմ ագրեսիվ են դարձել: Հայերի հանդեպ թուրքական քաղաքականությունը պարզորոշ գծագրվում է: Թուրքերը դեռ ամենեւին չեն հրաժարվել հայերին բնաջնջելու իրենց դիտավորությունից, նրանք փոխել են միայն իրենց մարտավարությունը: Հայերին գրգռում են, ինչպես որ դա հնարավոր է լինում, նրանց հանդեպ սադրանքներ են սարքում՝ հույս ունենալով այդ կերպ հայերի վրա նոր հարձակումների պատրվակ ձեռք բերել: Եթե դա չի հաջողվում, ապա նրանց փորձում են սովամահ անել եւ տնտեսապես ամբողջովին կործանել: Այդ նպատակով չնչին պատրվակներով Բաթումի պայմանագրին հակառակ գրավված տարածքը սիստեմատիկ եւ պլանավորված կերպով կողոպտվում է, եւ այն ամենը, ինչ հնարավոր է տանել, տարվում է: Ռազմական ավարը, որ թուրքերը Ալեքսանդրապոլում եւ նրա մերձակայքում գտել են, արտակարգ մեծ է: Այն մասին, որ նրանք, հակառակ ապրիլյան պայմանագրի որոշումների, տեղափոխում են նաեւ այն ամբողջ բամբակը, որ կարողանում են իրենց ձեռքը գցել, ես արդեն տեղեկացրել եմ[21]: Այն դիմադրությունը, որ թուրքերը ցուցաբերում են հանիրավի գրաված տարածքը ազատելու կոչերի հանդեպ, իմ կարծիքով բացառապես պայմանավորված է այն հանգամանքով, որ իրենց դեռ չի հաջողվել այդ շրջաններից ամբողջ ավարը հափշտակել»[22]:

Ֆոն Կրեսն իր տեղեկագրում նաեւ տեղեկացնում էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հետեւողականորեն խուսափում էր թուրքերին նոր հարձակումներ կատարելու համար պատրվակների առիթ տալ, սակայն չէր կարողանում արգելել նոր զինված «բանդաների» կազմավորումը, ինչը, սակայն, ոչ այնքան քաղաքական շարժառիթներով էր թելադրված, որքան քաղցի, որը մարդկանց հարկադրում էր կողոպուտի դիմել: Ինչ վերաբերում էր Ղարաբաղին, ապա Ղարաբաղի հայերը, ինչպես նշում էր գեներալը, վայրի լեռնցիներ էին, որոնք կամովին երբեք չէին հանձնի իրենց զենքերը: Իսկ եթե հանկարծ թուրքերը, հակառակ իր նախազգուշացումներին, փորձեին այնտեղ զինաթափում իրականացնել, ապա թեժ կռիվների բռնկումը, հարակից բոլոր հետեւանքներով հանդերձ, անխուսափելի կլիներ: Այդ հետեւանքները նաեւ զուտ ռազմական տեսանկյունից վնասաբեր կլինեին, քանի որ Ղարաբաղում լեռնային պատերազմ սկսելով՝

21 Ֆոն Կրեսը միաժամանակ հայտնում էր, որ բարոն Ֆրանկենշտայնը, որը ավտոմեքենայով Աղստեւով վերադարձել էր Թիֆլիս, ճանապարհին հանդիպել էր բամբակով բարձված 3-400 սայլերի, որոնք Ադրբեջանից գնում էին դեպի Ղարաքիլիսա: Անդ, էջ 425:

22 Անդ:

թուրքերը, եթե հայերին սովը չհաղթեր, այնտեղ երկար ժամանակով ստիպված կլինեին մեծ քանակությամբ ուժեր պահել: Ընդ որում, ուշագրավ է, որ ֆոն Կրեսն այդ առումով վերստին ընդգծելով Հայաստանի կառավարության խաղաղասիրական դիրքորոշումը եւ սադրանքների չենթարկվելու հաստատակամությունը, հարկ էր համարում մատնանշել, որ նա ողջ ժողովրդի հետ միասին պատրաստ էր մինչեւ վերջին մարդը կռվել, եթե թուրքերը նոր հարձակում ձեռնարկեին իրենց երկրի վրա: Գեներալն այդ կերպ որոշակիորեն ակնկարկում էր, որ դա կարող էր տեղի ունենալ նաեւ Ղարաբաղի հայության վրա թուրքերի կողմից հարձակում ձեռնարկելու դեպքում:

Ֆոն Կրեսը միաժամանակ կատարում էր հանգամանալից պարզաբանումներ Հայաստանի Հանրապետության ներքին իրադրության մասին, որի 750.000 տեղացի բնակիչները եւ 300 - 500.000 փախստականները սովամահության էին դատապարտված եւ «ձեռքերը կապված վիճակում» դիտում էին, թե թուրքերի կողմից գրավված շրջաններում ինչպես էր բերքը տեղափոխվում կամ պարզապես փչանում: Եթե Գերմանիան եւ Ավստրո-Հունգարիան լրջորեն մտադիր էին հայերին բնաջնջումից փրկել, ապա պետք է նաեւ այնքան տարածք ապահովեին, որը գոնե կապահովեր նրանց սննդի կարիքների մեծ մասը, իսկ ընթացիկ տարում, բոլոր դեպքերում երկու դաշնակցները հայերին պետք է մատակարարեին բավականաչափ հացահատիկ, որի դեպքում միայն համընդհանուր աղետը կկանխվեր: Գեներալը, նկատի առնելով այն հանգամանքը, որ թուրքերը, չնայած գերմանական կողմի առարկություններին, թողել էին, որ հայկական բերքը փչանար, նաեւ առաջարկում էր հայ ժողովրդի գոյատեւման համար անհրաժեշտ հացահատիկը վերցնել այն պաշարներից, որոնք թուրքերը ստանալու էին Ուկրաինայից կամ Ռումինիայից: Շուտով կսկսվեին ցրտերը, նշում էր ֆոն Կրեսը, եւ եթե մինչ այդ փախստականներին ազդեցիկ օգնություն չցուցաբերվեր կամ նրանց չթույլատրվեր վերադառնալ իրենց հայրենիքը, ապա սովը եւ սառնամանիքը նրանց կոչնչացնեին:

Տեղեկագիրը ոչ միայն իրադրության համակողմանի, փաստացի լուսաբանում էր, այլեւ գերմանական կառավարությանն ուղղված մի ազդու կոչ: «Էնվերի այն պնդումները, թե թուրքերը ստիպված էին գրավել Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի եւ մյուս շրջանները՝ հայերի եւ վրացիների միջեւ բախումները կանխելու համար, հորինվածք է, որի նպատակն է այստեղի իրադրությանն անտեղյակներին խաբել եւ շահել այնքան ժամանակ, որ այդ շրջաններից բերքը տեղափոխվի, եւ այդ տարածքներն ամբողջովին կողոպտվեն: Ես առնվազն չեմ կարող պատկերացնել, որ գերմանական կայսրությունը կարող է հանգիստ դիտել, թե ինչպես են մահմեդականները մի քրիստոնյա ժողովրդի սովամահության մատնել...: Եթե Կոստանդնուպոլսի համաժողովը դեռ երկար իրեն սպասել տա, բազմահազար մարդիկ կդատապարտվեն մահվան, եւ ոչ միայն Արեւելքում հասարակական կարծիքը, այլեւ պատմությունը Գերմանիային պատասխանատու կդարձնեն հայ ժողովրդի հետագա բնաջնջման համար: Հավատը Քառյակ միությունում Գերմանիայի ղեկավար դերի վերաբերյալ, ինչպես ես բազմիցս իմ պարտքն եմ համարել տեղեկացնել, արդեն սասանված է: Այն ամբողջովին կվերանա, եթե մենք ի վիճակի չլինենք հայերին ոչնչացումից պաշտպանել: Արեւելքում մեր հեղինակությունը եւ մեր ազդեցությունն այդ դեպքում զգալի վնաս կկրեն: Այն հարցին, թե ինչ պետք է կատարվի Հայաստանը

կենսունակ դարձնելու եւ կենտրոնական տերություններից մեկի վրա հենելով՝ ինքնուրույն գոյություն վարելու համար, ես կկամենայի պատասխանել՝ ասելով, որ Հայաստանը պետք է ստանա Բրեստ-Լիտովսկի պայմանագրի սահմանները, բայց առանց թուրքերի համար նրանց ցանկացած սահմանային շտկումների, քանի որ այդ սահմանային շտկումները Հայաստանից կխլեն հենց իր լավագույն սահմանային շրջանները: Դա միաժամանակ համապատասխանում է մեր սեփական շահերին, քանի որ եթե այդ շրջանները թողնվեն թուրքերին, ապա դրանց արտադրանքը գործարարության մեջ թուրքերի անպիտանության հետեւանքով իսկույնեւեթ անկում կապրի եւ գերմանական շուկայի համար կորած կլինի: Ռոգման ցանցի համապատասխան ընդլայնման, անհրաժեշտ մեքենաների ներկրման դեպքում հայերը այդ բերրի տարածքներից մետաքսի, բամբակի, բրնձի, գինու, կոնյակի, սպիրտի եւ պտղի, հավանորեն նաեւ հանքագործական արտադրանքի հարուստ բերք կհավաքեն, բայց թուրքերը՝ երբեք»[23]:

Ուշագրավ է, որ Ֆոն Կրեսը Բրեստի պայմանագրով սահմանագծված Հայաստանի տնտեսական նշանակությունն էլ ավելի ակնառու դարձնելու համար հաղորդում էր մինչեւ իսկ որոշակի թվական տվյալներ այդ տարածքի տնտեսական շահութաբերության մասին՝ միաժամանակ կատարելով ուղղակի համեմատություն Հայաստանի Հանրապետության առկա փաստացի տարածքի հետ: Բրեստի պայմանագրի սահմաններում գտնվող Հայաստանը ըստ այդմ կարող էր տարեկան արտադրել 1 միլիոն փութ[24] բամբակ, 40% թնդություն ունեցող 130.000 եւ 96% թնդություն ունեցող 100.000 դույլ[25] սպիրտ, 90.000 դույլ բարձրորակ կոնյակ, 4 միլիոն դույլ գինի, որի 75%-ը կարող էր խաղաղության ժամանակ արտահանվել շատ էժան գնով, 500.000 փութ բրինձ, որի շուրջ կեսը խաղաղության ժամանակ կարող էր արտահանվել, ինչպես նաեւ 100.000 փութ լավագույն որակի մետաքսաբոժոժ, մինչդեռ Հայաստանի Հանրապետության առկա տարածքում բամբակ գրեթե չէր կարող արտադրվել, միանգամայն բացառվում էր նաեւ բրնձի եւ մետաքսաբոժոժի արտադրությունը: Լավագույն դեպքում այնտեղ կարտադրվեր միայն 30.000 դույլ 40% թնդություն ունեցող եւ 15.000 դույլ 96% թնդություն ունեցող սպիրտ, 15.000 դույլ բարձրորակ կոնյակ եւ 80.000 դույլ գինի:

Այդ ամենով հանդերձ, ֆոն Կրեսն ամենեւին չէր նսեմացնում նաեւ այն իրական տնտեսական հնարավորությունները, որ ուներ հանրապետությունը, եւ որոնք կարող էին արդյունավորվել, եթե այնտեղ ազատ տեղաշարժման եւ տնտեսական գործունեության հնարավորություն ստեղծվեր: Ընդգծելով, որ ռոգման եւ էլեկտրաէներգիայի արտադրության նպատակներով Սեւանա լճի ջրի օգտագործումը Հայաստանի Հանրապետությանը զարգացման լայն հնարավորություններ էր ընձեռում, նա արտահայտում էր այն համոզումը, որ «գործարար, նախաձեռնող» եւ որոշակի կապիտալ ունեցող հայերը երկրում մեծ գործունեություն կծավալեին, եթե նրանց համապատասխան քաղաքական եւ տնտեսական հնարավորություն ընձեռվեր: Այդ առումով նա խիստ կարեւոր էր համարում, որ Ղարաքիլիսա-

23 Revidierte Ausgabe der von Johannes Lepsius 1919 unter dem Titel "Deutschland und Armenien" herausgegebenen Sammlung diplomatischer Aktenstücke, zusammengestellt und eingeleitet von Wolfgang Gust. Թ-իվ 426 փաստաթուղթը:

24 1 փութը համապատասխանում է 16,38 կգ-ին:

25 Նկատի ունի հին ռուսական "Wedro" չափամիավորը, որը կազմում է 12,3 լիտր:

Ալեքսանդրապոլ-Ջուլֆա-Թավրիզ երկաթուղին տրվեր հայերին,[26] իսկ եթե այդ երկաթուղին մնար թուրքերի ձեռքում, ապա Հայաստանը պարզապես կդատապարտվեր «տնտեսական մահվան»: Այդ պարագային ոչ միայն Թուրքիան ի վիճակի չէր լինի երկաթուղու հնարավորություններն ինչպես հարկն է օգտագործել եւ այն պատշաճ կերպով պահպանել, այլեւ թուրքական իշխանությունները կռվի զանազան պատրվակներով հայերին կզրկեին երկաթուղու տնտեսական օգտագործման հնարավորությունից[27]:

Այն հանգամանքը, որ գերմանական բարձրաստիճան ռազմաքաղաքական գործիչն էր այդքան հանգամանորեն կերպով լուսաբանում համեմատաբար մեծ, կենսունակ Հայաստանի տնտեսական օգտավետությունը Գերմանիայի համար, Հայաստանի Հանրապետության եւ Գերմանիայի փոխհարաբերություններում դեռեւս իր նախադեպը չուներ, եւ այս տեղեկագիրը դրա առաջին փաստացի օրինակն էր: Անկասկած, հարցադրումն այդ կերպ գերմանական կառավարության համար ավելի համոզիչ պետք է դառնար, իսկ հետեւություններ կատարելը՝ ավելի դյուրին: Գեներալն այսպիսով գործադրում էր իր բոլոր ջանքերը՝ գերմանական կառավարությանը ի նպաստ հայերի գործուն քայլերի մղելու համար՝ հանգամանորեն պարզաբանելով դրա թե քաղաքական, թե տնտեսական եւ թե բարոյական կարեւոր նշանակությունը Գերմանիայի համար: Ընդ որում նա այդ անում էր՝ վճռականորեն հերքելով նաեւ դիպվածաբար իրեն հայտնի դարձող այլ դիրքորոշումներն ու տեսակետները[28]:

Օգոստոսի 12-ին Ֆոն Կրեսը մի նոր հեռագիր ուղարկեց արտգործնախարարություն, որտեղ մերկացնելով Էնվերի վերոհիշյալ պատասխանում առկա դեմագոգիան ու կեղծիքները՝ նա նորից ընդգծում էր հայ փախստականներին օր առաջ իրենց հայրենի բնակավայրերը վերադարձնելու կարեւորությունը: «Էնվերի պատասխանը հենվում է կեղծ փաստարկների վրա,- գրում էր գեներալը:- Խոսքը վերաբերում է ոչ թե նրան, որ հայերն իրավունք ունենան տեղափոխվել Ալեքսանդրապոլ-Ջուլֆայից արեւելք ընկած տարածքը, այլ նրան, որ այնտեղ կուտակված, սովից հուսահատության մատնված հայերը երկաթուղով կարողանան վերադառնալ արեւմուտք, եւ որ ամբողջ տարածքը մինչեւ Բրեստի սահմանը Հայաստանի Հանրապետությանը վերադարձվի փախստականների բնակեցման համար: Հայերին որոշ շրջաններ, զորօրինակ Բաթում վերադառնալու վերաբերյալ սկզբունքորեն հատկացված թույլտվության իրագործումը՝ խոչընդոտվում է նրանով, որ Էսադ փաշան

26 Այդ դեպքում, ըստ Ֆոն Կրեսի, Հայաստանում եւս, ինչպես Վրաստանում, թուրքերին կարող էր հնարավորություն տրվել երկաթուղով կատարել իրենց ռազմական փոխադրումները:

27 Տես անդ:

28 Հայաստանի վարչապետը, օրինակ, Ֆոն Կրեսի հետ ունեցած զաղտնի զրույցի ժամանակ նրան ներկայացրել էր Կոստանդնուպոլսում գտնվող Հայաստանի ներկայացուցչի այն տեղեկությունը, որ Կոստանդնուպոլսի գերմանական դեսպան Բեռնշտորֆը փորձում էր համաժողովի հրավիրումը ձգձգել, նաեւ խոչընդոտել, որ Հայաստանը ավստրո-հունգարական շահերի ոլորտ դառնար՝ գրավվելով ավստրո-հունգարական զորամասերի կողմից: «...Առանց իմանալու այն դրդապատճառները, որոնք պարոն դեսպանին իր դիրքորոշման համար առիթ են ծառայել,- գրում էր այդ առնչությամբ գեներալը,- ես կուզենայի իմ տեսակետից ընդգծել, որ Կովկասում իրադրությունը հրամայաբար պահանջում է համաժողովի շուտափույթ հրավիրում եւ առկախ հարցերի, հատկապես սահմանների կարգավորման ամենամոտակա լուծում: Չկա մի օր, երբ սահմանային միջադեպեր ի հայտ չգան, որոնց պատճառն այն է, որ սահմանները դեռ որոշված չեն: Այդ միջադեպերը կովկասյան պետությունների միջեւ արտակարգ գրգռվածություն են ստեղծում, եւ մարդիկ արդեն սկսում են կասկած գածել առ այն, որ կենտրոնական տերությունները կովկասյան պետությունների հանդեպ իրենց խոստումներին լրջորեն են վերաբերվում»: Անդ:

յուրաքանչյուր հայի համար գրավոր դիմում է պահանջում եւ այդ դիմումներին ընթացք չի տալիս: Այսպեղի թուրքական ներկայացուցչի փվյալներով Էսադ փաշայի մոտ պեպք է շաբաթներ ի վեր ավելի քան 1200 ընթացք չսպացած դիմումներ լինեն»[29]:

Ֆոն Կրեսը, դարձյալ նկատի ունենալով Էնվերի մտացածին փաստարկները, միաժամանակ հավաստիացնում էր, որ հայկական կառավարությունը Թուրքիայի հետ խաղաղ հարաբերությունների կողմնակից էր եւ դրա կարիքն ուներ: Այն մինչեւ իսկ երկրից արտաքսել էր զինված խմբավորման առաջնորդին,[30] նրա համախոհների մի մասին ձերբակալել, իսկ Ջուլֆայի, Բաքվի եւ Ուրմիայի մոտ գործող զինված խմբերի պարագային խոսքը վերաբերում էր մեծ մասամբ նախկին թուրքահայերին, որոնք ամեն բան կորցրել էին եւ այդ պատճառով շարունակում էին կռվել: Իսկ ինչ վերաբերում էր Էնվերի այն պնդմանը, թե հայերի վերադարձի դեպքում թուրքական կռվող բանակի համար իբրեւ թե աննպաստ իրադրություն կստեղծվեր, գեներալը մատնանշում էր, որ թիկունքի հետ թուրքական բանակի կապը կարող էր հանձնվել ավստրիացիների եւ գերմանացիների պաշտպանությանը: «Հայաստանի Հանրապետության փոքրիկ տարածքի վրա սովամահության մատնված հարյուր հազարավոր փախստականների կուտակումը,- գրում էր գեներալը,- անկասկած ավելի մեծ վտանգ է նշանակում, քան երկրում նրանց տեղաբաշխումը»[31]:

Ֆոն Կրեսի՝ ինչպես նշված տեղեկագիրը, այնպես էլ հիշատակված մյուս հեռագրերը բավական լայն կերպով շրջանառվեցին Գերմանիայի ղեկավար շրջանակներում: Կանցլերին ուղարկված տեղեկագիրը ստացավ նաեւ արտաքին գործերի նախարարությունը, որի պետքարտուղարի տեղակալ Բուշեն իր հերթին նրա մի հատվածը, որտեղ նաեւ ընդգծվում էր, որ Հայաստանը միայն կենտրոնական տերությունների շուտափույթ օգնության դեպքում կործանումից կփրկվեր, ուղարկեց գերմանական ռազմական գլխավոր շտաբի պետ բարոն ֆոն Բերկհայմին[32]: Իսկ ֆոն Կրեսի՝ օգոստոսի 12-ի հեռագիրը արտգործնախարարության պետքարտուղար ֆոն Հինթցեն օգոստոսի 22-ին ուղարկեց նաեւ Կոստանդնուպոլսի դեսպան Բեռնշտորֆին՝ նրան հանձնարարելով Բ. Դռան ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ դեպի որոշ շրջաններ հայ փախստականների վերադարձը թույլատրելու նրա մտադրությունը Էսադ փաշայի կողմից ձախողման էր ենթարկվում: Դեսպանին միաժամանակ հանձնարարվում էր թուրքական կառավարությանը խնդրել մեկ անգամ եւս կշռադատել, թե արդյոք մինչեւ Բրեստի սահմանն ընկած ամբողջ տարածքը վերադարձող հայերի առջեւ բանալը ավելի մեծ կարեւորություն չուներ, քան դրա արգելումը: Դեսպանին հրահանգվում էր առժամանակ Բ. Դռանը չհայտնել թուրքական բանակի հետադարձ կապը գերմանացիների եւ ավստրո-հունգարացիների պաշտպանության տակ վերցնելու՝ ֆոն Կրեսի արտահայտած նկատառման մասին[33]:

Ֆոն Կրեսի եւ Հայաստանի Հանրապետության կողմից գերմանական

29 Անդ, թիվ 432 փաստաթուղթը:

30 Խոսքն անկասկած, վերաբերում է Անդրանիկին:

31 Անդ:

32 Die Armenische Frage..., էջ 572-573: Գեներալ ֆոն Կրեսը թուրքական կողմին որոշակի զիջումներ պարտադրելու համար հաճախ սեփական նախաձեռնությամբ արգելում էր նրանց կովկասյան երկաթուղագծերն օգտագործել: Տես Գուստով Բեռնշտորֆի օգոստոսի 6-ի հեռագիրը: "Revidierte Ausgabe...", թիվ 427 փաստաթուղթը:

33 Տես անդ, թիվ 432 փաստաթուղթը:

կառավարությանը ներկայացվող տեղեկագրերը, կոչերն ու խնդրագրերը իրենց բնույթով, հարցերի ընդգրկումով եւ բովանդակությամբ այնպիսին էին, որ Գերմանիան կարծես թե ավելի պեպք է հսպակեցներ իր դիրքորոշումը հայկական խնդրի առնչությամբ՝_իր թուրք դաշնակցին պարտադրելով ճանաչել Բրեստի կամ առնվազն Բաթումի պայմանագրով նախանշված սահմանները, ինչպես եւ հայ փախստականներին անվերապահորեն վերադարձի հնարավորություն տալ: Գերմանա-թուրքական հարաբերություններում ինչպես հայկական, այնպես էլ կովկասյան այլ խնդիրների հետեւանքով առաջացած լարվածությունը այդպիսով կհասներ նաեւ իր՝ քիչ թե շատ արդյունավետ հանգուցակետին: Պաշտոնական Գերմանիան, սակայն, հակված չէր ցուցաբերելու այդ վճռականությունը, եւ հատկանշական է, որ մասնավորապես հայկական խնդրի առնչությամբ Գերմանիայի քաղաքական ղեկավարության ցուցաբերած ձեռնպահ եւ հանդուրժողական դիրքորոշմանը զգալիորեն նպաստում էր Կոստանդնուպոլսի դեսպան Բեռնշտորֆը, որի վերաբերյալ ֆոն Կրեսի արտահայտած վերը նշված տեսակետը միանգամայն համապատասխանում էր իրականությանը: Դրա ցայտուն վկայությունն էր, օրինակ օգոստոսի 5-ին դեսպանի կողմից արտգործնախարարություն ուղարկված հեռագիրը, որտեղ նա նշում էր, որ Թուրքիայի հետ բոլոր վիճելի հարցերը անհրաժեշտ էր հետաձգել մինչեւ պատերազմի ավարտը, եւ որ նա անձամբ քաղաքական ու ռազմական մեծ հաջողություն կհամարեր, եթե Գերմանիան Թուրքիային կարողանար մինչեւ պատերազմի վերջը պահել իր կողքին, նաեւ օգներ, որ վերջինս պատերազմից հնարավորին չափ անվնաս եւ նվազագույն կորուստներով դուրս գար, քանի որ, ըստ դեսպանի, այլապես Գերմանիայի հեղինակությունը Թուրքիայում կտապալվեր: Ըստ դեսպանի՝ մեծ դժվարությամբ էր իրեն եւ գեներալ ֆոն Ջեկտին հաջողվել Թուրքիային համոզել, որ այն իր կովկասյան գործողությունների ժամանակ Ռուսաստանի, ինչպես նաեւ Վրաստանի հետ հաշվի նստեր: Թուրքական կառավարությունը դրան համաձայնել էր, քանի որ նա դեռ չէր ուզում խզել կապերը Գերմանիայի հետ, մինդեռ Վրաստան ներխուժելով՝ հարկադրված կլիներ պայքարել գերմանական զինված ուժերի դեմ: Թուրքիայի զիջողականությունը դրանով, ըստ դեսպանի, հասել էր իր վերջնասահմանին, եւ նրան ավելին հնարավոր չէր պարտադրել:

Բեռնշտորֆն անգամ փորձում էր կառավարությանը հաշտեցնել այն մտքի հետ, որ Թուրքիան մինչեւ իսկ Բրեստի պայմանագրով ամրագրված սահմանների ճանաչումը խոստանալու դեպքում կարող էր այն չկատարել: «Եթե նույնիսկ նրանք մեզ խոստանան ընդհանուր առմամբ եւ քաշվել մինչեւ Բրեստ-Լիտովսկի սահմանը,- գրում էր նա,- նրանք կովկասյան տարածքում իշխող լիարժեք անարխիայի պարագայում հեշտությամբ պատրվակ կգտնեն հայերի հետ այդուհետ էլ կռվելու եւ իրենց խոստումը չկատարելու համար: Ֆելդմարշալ ֆոն Հինդեբուրգին ուղղված Էնվեր փաշայի վերջին հեռագիրը այդ հարցում կասկած չի թողնում: Դրանից նաեւ բխում է, որ թուրքերը հայերի հանդեպ բնավ բարի ցանկություններ չունեն, ինչում ես երբեք չեմ կարակուսել: ... Ինձ հետ գաղտնազրույցում հայ պատվիրակները խոստանում են, որ հայերը ոչ մի դեպքում չեն վերադառնա այն տարածքները, որոնք գտնվում են թուրքական տիրապետության ներքո: Իմ կարծիքով ուտոպիա է, երբ Թիֆլիսից թուրքերից հայերի համար երաշխիքներ են պահանջվում: Այնտեղ, որտեղ մշակութային ցածր մակարդակի վրա առկա է ռասայական ատելությունը,

չեն կարող երաշխիքներ լինել: Ովքեր մեծամասնություն են կազմում, փոքրամասնությանը կոչնչացնեն: Գերմանացի վկաների կողմից ապացուցված է, որ հայերը նույնպես այդպես են վարվում: Դա սովամահ եղողների հանդեպ կարեկցության դրդապատճառով թելադրված չէ: Դրան թուրքերը միայն պատասխանում են, որ Սիրիայում եւ Միջագետքում իրենց հավատակիցներից հարյուր-հազարավորներն ու նաեւ հազարավոր թուրքական զինվորներ սովամահ են եղել, ինչի պատճառով Թուրքիան, սակայն, չի հոգնել պատերազմից: Բացի այդ թուրքերի համար անպատճառ ցանկալի է, որ կես միլիոն հայեր մահանան...»[34]:

Հատկանշական է, որ դրանով հանդերձ Բեռնշտորֆը շարունակում էր համառորեն պաշտպանել իր՝ նախկինում եւս արտահայտած այն տեսակետը, թե կարելի էր Հայաստանը, նաեւ Վրաստանն ամբողջովին զոհաբերել կամ այլ կերպ ասած, զիջել Թուրքիային՝ փոխարենը ստանալով որոշակի քաղաքական ու տնտեսական կոնցեսիաներ: «Քանի որ ես համոզված եմ,- գրում էր նա,- որ մենք, բավականաչափ ուժ չունենալով, չենք կարող թուրքերին եր պահել Կովկասում իրենց ցանկությունների կատարումից ... ես սկզբից եւեթ միջնորդել եմ, որ քաղաքական ու տնտեսական կոնցեսիաների դիմաց նրանց այնտեղ գործելու ազատություն տանք: Այդ դեպքում մենք նոր պատասխանատվություն չէինք ստանձնի այնպիսի կասկածելի բարեկամների համար, ինչպիսին վրացիներն ու հայերն են: Երբ արդեն պարզ է դարձել, որ բացակայում են այն նախադրյալները, որոնք նկատի առնելով՝ մենք Վրաստան գնացինք, ես այսօր, ավելի քան երբեւէ, այդ նույն կարծիքին եմ»[35]:

Իսկ եթե նրա առաջարկած քաղաքականությունը Բեռլինի կողմից իրագործելի չհամարվեր, ապա նրա կարծիքով մնում էր գործելու միայն երկու հնարավորություն. կամ Գերմանիան պետք է այնքան զորամասեր ուղարկեր Վրաստան եւ Հայաստան, որ կարողանար բռնի կերպով իր կամքը թուրքերին պարտադրել եւ կամ պետք է Թուրքիային հայտարարեր, որ Գերմանիան նրա «հաստակողության» հետեւանքով այլեւս որեւէ արժեք չէր տալիս Կոստանդնուպոլսում համաժողով հրավիրելուն, փոխարենը, սակայն, թուրքերը թողնվելու էին իրենց հույսին, եթե Ռուսաստանի հետ նոր պատերազմ սկսվեր: Միաժամանակ Գերմանիան կշարունակեր Վրաստանում իր դիրքերը տնտեսական նպատակներով ամրապնդել: Դեսպանի համոզմամբ, սակայն, այդ երկու գործելակերպն էլ կառաջացնեին Քառյակ միության տրոհման վտանգ. «... Ես, սակայն, առաջացած կոնֆլիկտի որեւէ ուրիշ լուծում չեմ տեսնում,- գրում էր նա,- քանի որ բնավ չի կարելի կարծել, թե թուրքերն այժմ հոժարակամ եւ անկեղծորեն տեղի կտան»[36]:

Ինքնին հասկանալի է, որ հայ ժողովրդի շահերի պաշտպանության դեպքում Քառյակ միության տրոհման՝ դեսպանի մտահոգությունն իրատեսական չէր, եւ այն պարզապես պատրվակ էր ծառայում Թուրքիայի հանդեպ հանդուրժողական քաղաքականության վարման՝ նրա կողմից պաշտպանվող տեսակետը հնարավորին չափ ամրապնդելու համար: Բեռնշտորֆը կովկասյան խնդրում միանշանակ թուրքական քաղաքականության եւ շահերի պաշտպանության կողմնակից էր՝ դա համապատասխան համարելով կամ

34 Die Armenische Frage..., էջ 565-566:
35 Անդ, էջ 566:
36 Անդ:

փորձելով համապատասխանեցնել Գերմանիայի շահերին, եւ եթե նկատի առնենք, որ դեսպանները արտաքին քաղաքականության իրագործումից զատ սովորաբար կարեւոր դերակատարություն ունեին նաեւ այդ քաղաքականության մշակման հարցում, ապա այդ օրերին նրա պաշտոնավարությունը կարելի էր համարել հերթական ջարիքը օրհասական դրության մեջ գտնվող հայության համար:

Բեռնշտորֆն, իր թուրք գործընկերների նման ամենեւին շահագրգռված չէր նաեւ Կոստանդնուպոլսի համաժողովի կազմակերպման հարցում՝ Կովկասին վերաբերող սահմանային եւ այլ խնդիրների կարգավորման առավել ցանկալի ճանապարհը համարելով դաշնակից պետությունների միջեւ անդրկուլիսյան համաձայնության կայացումը: Ուստի, հասկանալի է, որ իր հաջորդ՝ օգոստոսի 6-ի հեռագրում նա կասկածի էր ենթարկում նաեւ Կովկասում համաժողով հրավիրելու անհրաժեշտությունը՝ նշելով, որ թուրքական կողմը համաձայն էր, որ համաժողովում քննարկման ենթակա հարցերը կարգավորվեին չորս դաշնակիցների միջեւ փոխհամաձայնության կայացման միջոցով: Ուշագրավ էր, որ դեսպանը միաժամանակ սկզբից եւեթ բացառում էր Թուրքիայի կողմից Բրեստի պայմանագրային սահմանների ճանաչումը՝ պնդելով, որ Թուրքիայի հետ բոլոր հարցերի վերաբերյալ կարելի էր փոխհամաձայնության հասնել, բացի այդ հարցից: Թուրքական կառավարությունը, նշում էր դեսպանը, չէր կամենում անգամ լսել Բրեստի պայմանագրի մասին: Նրանք այդ պահանջը մշտապես դիտում էին որպես «Թուրքիայի ենթարկում վրացիների եւ հայերի ցանկություններին, որոնք միանգամայն բավարարված կլինեին Բաթումի խաղաղության պայմանագրով, եթե մենք նրանց չպաշտպանեինք»[37]:

Հատկանշական է, որ դեսպանը չէր զլանում անձամբ նույնպես միանգամայն բացառել Բրեստի պայմանագրի համաձայն սահմանները կարգավորելու հնարավորությունը. «Այդ հարցը, իմ կարծիքով, առհասարակ լուծելի չէ,- գրում էր նա,- քանի որ թուրքերը տեղի չեն տա, իսկ մենք միջոցներ չունենք նրանց ստիպելու, որ եր գնան մինչեւ Բրեստ-Լիտովսկի սահմանները»[38]:

Ինքնին հասկանալի է, որ դեսպանը կամ գերագնահատում էր գերմանական ճնշմանը թուրքական ընդդիմության հնարավորությունը կամ պարզապես փորձում էր իրավիճակն այդ կերպ բնութագրել՝ թուրքական կառավարության ցանկություններին միանգամայն համահունչ իր քաղաքական դիրքորոշումն առավել համոզիչ դարձնելու համար, մինչդեռ Թուրքիայի դիմադրության եւ կամ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու դեպքում Քառյակ միության տրոհման հնարավորությունը հիմնավորապես հերքվել էր Ֆոն Լոսովի, ֆոն Կրեսի եւ այլոց կողմից:

Բեռնշտորֆը հեռագրում միաժամանակ քննադատությամբ էր անդրադառնում գեներալ ֆոն Կրեսի հայանպաստ գործելակերպին՝ հայտնելով, թե Էնվեր փաշան իր հետ ունեցած տեսական զրույցում նույնպես շատ էր գանգատվել Վրաստանին եւ Հայաստանին Գերմանիայի կողմից ցուցաբերվող «պաշտպանողական քաղաքականությունից»: Այդ առնչությամբ դեսպանը մասնավորապես անդրադառնում էր այն փաստին, որ ֆոն Կրեսը մի շարք գերմանացի սպաների հետ մեկնել էր Երեւան՝ «հայկական կառավարությունը

37 Revidierte Ausgabe..., թիվ 427 փաստաթուղթը:
38 Անդ:

կազմակերպելու համար»[39]: Ըստ դեսպանի՝ այդ այցը կարող էր որոշակի վտանգներ հարուցել, այն է՝ հայերին ոգեւորել նոր կռիվներ սկսելու համար, որոնց ժամանակ, դատելով ֆոն Կրեսի գործելակերպից՝ գերմանացի սպաները կարող էին հայերի կողմից հանդես գալ: Դեսպանը խիստ քննադատությամբ էր անդրադառնում նաեւ այն փաստին, որ, ինչպես արդեն նաեւ նշվել է, ֆոն Կրեսը հաճախ արգելում էր թուրքական կողմին կովկասյան երկաթուղիներն օգտագործել. մի իրողություն, որը դեսպանի կարծիքով վնասում էր պատերազմելուն եւ Գերմանիայի հանդեպ Թուրքիայում բացասական տրամադրություններ էր ստեղծում: «Մեր բանակի գլխավոր հրամանատարությունը կարգադրում է, որ թուրքական զորամասերը առավելագույն արագությամբ տեղափոխվեն Միջագետք,- գրում էր նա:- Գեներալ ֆոն Կրեսն արգելում է երկաթուղու օգտագործումը՝ թուրքերին հարկադրելու համար, որ զիջումների գնան: Արդյունքում թուրքերը տեղի չեն տալիս, իսկ կարգադրված ռազմական գործողություններն էլ չեն կայանում, այսինքն՝ խոչընդոտվում է ընդհանուր պատերազմելուն: Դրանից, այսպիսով, միայն մեր թշնամիներն են օգտվում»[40]:

Ինչ վերաբերում է ֆոն Կրեսին, ապա նա, ջանալով անել հնարավորը հայ ժողովրդին օգնելու համար, Բեռնշտորֆի մոտ նույնպես հայերի դրության վերաբերյալ ըմբոնում ձեւավորելու մի փորձ կատարեց՝ օգոստոսի 20-ին նրան առաքելով մի հեռագիր, որը դեսպանի կողմից օգոստոսի 25-ին ուղարկվեց նաեւ ԱԳՆ: «Հայ փախստականների վերադարձի հարցի առնչությամբ թուրքական թվացյալ համաձայնությունը ոչ մի արժեք չունի,- գրում էր ֆոն Կրեսը:- Մինչդեռ թուրքական զորքերի գրաված տարածքներում բերքը, որչափ որ այն թուրքերի կողմից չի տեղափոխվում, աշխատուժի անբավարարության հետեւանքով, փտում է, Էնվեր փաշայի մատնանշած գծից արեւելք ընկած անբերրի շրջանում սեղմված մարդկանց զանգվածներն անխուսափելի կործանման են դատապարտված: Դրությունն օրեցօր ավելի է վատթարանում: Եթե Հայաստանի կառավարության եւ ավազակային հոգեւորականության օգնության հուսահատ կանչերը դառնան ձայն բարբառոյ յանապատի, ապա այդ հին քրիստոնյա ժողովրդի ոչնչացման պատասխանատվությունը հավերժ կծանրանա Գերմանիայի եւ Ավստրիայի վրա: Պատմությունը զիջում չի կատարելու եւ չպետք է կատարի այն հարցում, որ կենտրոնական Եվրոպայի երկու մեծ քրիստոնյա տերությունները ի վիճակի չեղան գոնե այս դեպքում, երբ հարցը վերաբերում է մի ամբողջ ժողովրդի լինել-չլինելուն, իրենց կամքը պարտադրել իրենց ասիացի դաշնակցին...»[41]:

Այսպես՝ հայ ժողովրդի դրության վերաբերյալ Գերմանիայի կողմից գործուն միջամտության ցուցաբերման հարցի առնչությամբ ի հայտ էին եկել տարակարծություններ,

---

39 Անդ: Բեռնշտորֆը փաստորեն չէր խուսափում նաեւ այդօրինակ սադրիչ տեղեկություններից: Ինչպես արդեն նշվել է, ֆոն Կրեսը մեկնել էր Երեւան հայկական կառավարությանը ներկայանալու, այլ ոչ թե այն կազմակերպելու համար:

40 Անդ: Հեռագրի վերջում նա հակիրճ հաղորդում էր նաեւ այն մասին, որ թուրքական Նախարարների խորհուրդը թուրքահայերի համար համաներման կարգադրությունն արդեն կատարել էր, եւ դրա իրագործումը հանձնարարված էր Ջամփոլադին:

41 Deutschland und Armenien 1914-1918..., էջ 431: Այնուհետեւ ֆոն Կրեսը դեսպանի ուշադրությունը դարձյալ հրավիրում էր այն հանգամանքի վրա, որ Էսադ փաշան, մինչեւ իսկ այն դեպքում, երբ խոսքը վերաբերում էր միայն որոշ շրջանների, փաստորեն մերժում էր կատարված դիմումների հիման վրա հայերին վերադարձի թույլտվություն հատկացնել: Իսկ հեռագրի մնացած տեքստը, որ մոտ տասը տող էր կազմում, անհնար է եղել վերծանել, եւ դրանից պահպանվել են միայն առանձին կցկտուր բառեր ու արտահայտություններ: Տես Revidierte Ausgabe..., թիվ 434 փաստաթուղթը:

հակասություններ, որոնք մի կողմից Գերմանիայի եւ Թուրքիայի միջեւ, մյուս կողմից հենց Գերմանիայի ռազմաքաղաքական շրջաններում օգոստոսի սկզբին, ավելի սուր բնույթ էին ընդունել՝ պաշտոնական Գերմանիային որոշակիորեն հարկադրելով հստակեցնել իր դիրքորոշումը: Կարելի էր ենթադրել, որ գեներալներ ֆոն Լոսովի, ֆոն Կրեսի, նաեւ հայ պատվիրակության հետեւողական տեղեկատվության, Բրեստի պայմանագրային սահմանների ճանաչման հարցի նախընթաց վերարծարծումների արդյունքում Գերմանիան պետք է վերջապես հրաժարվեր Կովկասում թուրքական ինքնիշխան քաղաքականության հանդեպ իր զուսպ ու հանդուրժողական կեցվածքից եւ Թուրքիայի վրա գործադրեր իրական ճնշում Բրեստի կամ առնվազն Բաթումի պայմանագրային սահմանները ճանաչելու, ինչպես եւ իր հակահայկական քաղաքականությունը դադարեցնելու համար: Պաշտոնական Գերմանիան, սակայն, շարունակում էր հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ պատասխանատվությունն ըստ հնարավորին իրենից վանել՝ որոշակի դիրքորոշման արտահայտման անհրաժեշտության դեպքում առավել հակված լինելով հետեւելու Բեռնշտորֆի պաշտպանած քաղաքական գծին:

Ֆոն Կրեսը, ինչպես նշվեց, օգոստոսի 4-ի իր հեռագիրն ուղարկել էր նաեւ Վիեննա՝ ավստրիական ԱԳՆ: Գերմանական արտգործնախարարությունն այդ հանգամանքը համարում էր շարժառիթ՝ հարցը Ավստրո-Հունգարիայի հայեցողությանը թողնելու եւ Գերմանիայի ձեռնպահությունը հիմնավորելու համար: Այս շեշտադրումով էր բնութագրվում Բերկհայմին ուղղված՝ ԱԳՆ քաղաքական բաժանմունքի ղեկավար ֆոն Շթումի օգոստոսի 19-ի հեռագրային ցուցումն այն մասին, որ Հայաստանին օգնության ցուցաբերման հարցի առնչությամբ հանձնարարելի էր համարվում նախ սպասել Վիեննայի կառավարության դիրքորոշման արտահայտմանը: «Մեզ համար որոշակի բեռնաթափում կլիներ,- այնտեղ նշում էր ֆոն Շթումը,- եթե նա (ավստրոհունգարական կառավարությունը - Ա. Հ.) ստանձներ այդ անշնորհակալ առաջադրանքը: Ամեն դեպքում անհավանական է, որ նա այդ կանի»[42]:

Գերմանիայի քաղաքական ղեկավարությունը նույնիսկ խորհում էր այդ «անշնորհակալ հարցից» ազատվել՝ հայ փախստականներին վերադարձի հնարավորություն ստեղծելու փոխարեն նրանց դեպի հյուսիս, ասել է թե Վրաստան կամ, թերեւս նաեւ Ռուսաստան ուղարկելու միջոցով: Այդ բովանդակությունն ուներ ֆոն Շչումի՝ օգոստոսի 14-ին ֆոն Կրեսին ուղղած հեռագիրը, որտեղ նշվում էր, որ փախստականների հարցի վերաբերյալ թուրքական կառավարության «մինչայժմյան դիրքորոշումը» գերմանական կողմին հարկադրում էր քննել այն հարցը, թե արդյոք հայ փախստականների տեղափոխումը դեպի հյուսիս հնարավո՞ր էր եւ կարո՞ղ էր անմիջապես սկսվել: Ընդ որում նա ֆոն Կրեսին խնդրում էր իր տեսակետն արտահայտել այդ առնչությամբ եւ ըստ հանգամանքների ձեռնարկել միջոցառումներ դա իրագործելու համար[43]:

Չնայած այդ առնչությամբ ֆոն Կրեսի գրավոր պատասխանը չկա հրապարակում

42 Die Armenische Frage..., էջ 574: Գերմանիան դա Ավստրո-Հունգարիայի հայեցողությանն էր թողնում՝ ամբողջովին ձեռնպահ մնալով այդ հարցում որեւէ դերակատարություն ունենալուց: Այդ առումով նաեւ բնութագրական է, որ պետքարտուղար Վինթցեն դեռ օգոստոսի 4-ին Բարոն ֆոն Լերսներին տեղեկացնում էր, թե քանի որ Հայաստանում տեղակայելու համար համապատասխան գերմանական զորամասեր չկային, ապա նա բնավ չէր առարկում Հայաստանում ավստրո-հունգարական զորամասեր տեղակայելու մտքին: Անդ, էջ 564:

43 Տես Deutschland und Armenien 1914-1918..., էջ 427-428:

առկա սկզբնաղբյուրներում, այնուհանդերձ գերմանական պաշտոնական գրագրության հետագա ընթացքը թույլ է տալիս կռահել, որ դա պետք է բացասական եղած լինի:

Ինչեւէ, ի վերջո, օգոստոսի 20-ին գեներալ ֆոն Կրեսին ուղարկված հեռագրում գերմանական արտգործնախարարությունը, կարելի է ասել, աննախադեպ կերպով որոշակիորեն արտահայտեց իր դիրքորոշումը հայկական խնդրի առնչությամբ. «Առանց ամենաանշան իսկ չափով թերագնահատելու այն քաղաքական կարեւորությունը, որ ունի հայերի դրության բարելավումը մեզ եւ Թուրքիայի համար,- գրում էր արտգործնախարարության պետքարտուղար Հինթցեն գեներալին,- եւ մարդկայնորեն լիովին կիսելով նրանց տառապանքները՝ մենք, սակայն, հարկադրված ենք, հաշվի առնելով Թուրքիային, հայկական ցանկությունների հանդեպ որոշակի զսպվածություն պահպանել: Ինքնին հասկանալի է, որ մենք ազատ ենք մարդասիրական միջոցառումներ իրականացնելու հարցում: Այդ տեսանկյունից հայերի՝ այստեղի բարեկամները մեզ դրդում են Երեւանի կառավարությանը նույն քանակությամբ հացահատիկ տալ, ինչպես վրացական կառավարությանը: Թե արդյոք հնարավոր կլինի այդ հարցը համաձայնեցնել սննդամատակարարման ռազմական ծառայության հետ, շատ կասկածելի է: Նախքան ես այդ ուղղությամբ փորձ կձեռնարկեմ, Զերդ Բարեծնությանը խնդրում եմ տեղեկացնել, թե արդյոք հնարավո՞ր է Վրաստանով հացահատիկ հասցնել Հայաստան, չնայած մենք հենց իրենց՝ վրացիներին էլ ավելի աննշան քանակությամբ ենք կարողանում տալ, քան սկզբում էինք խոստացել»[44]:

Օգոստոսի 24-ին պետքարտուղար Հինթցեն ֆոն Կրեսին ուղղված մի հեռագրով վերը նշված ոգով արտահայտեց նաեւ իր վերաբերմունքը նրա Երեւան կատարած այցելության վերաբերյալ, որտեղ նա մասնավորապես նշում էր, որ միանգամայն համաձայն էր ֆոն Կրեսի Երեւան կատարած այցելության հետ եւ միաժամանակ ողջունում էր, որ նա չի մասնակցել պառլամենտի բացմանը: «Քանի որ կայսերական դեսպանի շատ լուրջ առարկությունները եւ բանակի գլխավոր հրամանատարության եռանդուն քայլերը Թուրքիային հայկական տարածքն ազատելու եւ փախստականների վերադարձը թույլատրելու որոշմանը չեն հանգեցրել, ցավոք, կասկածելի է թվում, թե մենք առհասարակ ի վիճակի կլինենք հայերին ազդեցիկ օգնություն ցուցաբերել: Մեր հետագա գործելակերպը կախված կլինի ընդհանուր քաղաքական եւ ռազմական իրավիճակից: Այդ ընթացքում մենք պետք է խուսափենք հայերի մեջ նոր հույսեր հարուցելուց, որոնց հավանաբար ստիպված կլինենք հուսախաբ անել»[45]:

Ինչեւէ, վերոնշյալ պաշտոնական հեռագրերով պարզ էր դառնում, որ հայկական կողմը քաղաքական աջակցության որեւէ ակնկալիք Գերմանիայից չէր կարող ունենալ, իսկ մարդասիրական օգնության հնարավորությունը խիստ կասկածելի էր: Մինչդեռ թուրքական կառավարությունը շտապում էր, օգտվելով Գերմանիայի թողտվությունից, կեղծ իրավական հիմքեր ստեղծել Կարսի նահանգը յուրացնելու համար, այն է՝ հայերի վտարման եւ մահմեդականների ներգաղթի միջոցով նահանգի բնակչության փաստացի հաշվեկշիռը փոխելուց հետո անցկացնել հանրաքվե՝ այն Օսմանյան կայսրությանը

44 Անդ, էջ 428:
45 Revidierte Ausgabe..., թիվ 433 փաստաթուղթը:

միացնելու նպատակով: Օգոստոսի 19-ին Կարսի Հայոց ազգային խորհուրդը հանդես եկավ թուրքական կառավարության այդ գործելակերպի եւ Բրեստի պայմանագրի ոտնահարման դեմ գերմանական կառավարությանն ուղղված վճռական բողոքով, որ նախ առաքվեց գեներալ ֆոն Կրեսին, իսկ վերջինս էլ այն օգոստոսի 21-ին ուղարկեց գերմանական արտգործնախարարություն: Այնտեղ մասնավորապես նշվում էր, որ Կարսի Հայոց ազգային խորհուրդը, որն այդ շրջանի «բազմաչարչար հայ բնակչության» կամքն ու շահերն արտահայտող միակ լիազոր մարմինն էր, նահանգի հայ բնակչության անունից ամենավճռական կերպով բողոքում էր թուրքական կառավարության կողմից ձեռնարկված հանրաքվեի դեմ եւ հայտարարում էր, որ Բրեստի պայմանագրի 4-րդ պարագրաֆը թուրքական կառավարության կողմից ամենակոպիտ կերպով ոտնահարվել էր, քանի որ մի կողմից՝ թուրքական կառավարությունը մասամբ բռնի կերպով, մասամբ կովկասյան կառավարությունների վրա ճնշման գործադրմամբ, հակառակ պայմանագրի, երկրամասը զավթել էր եւ մյուս կողմից՝ ինքնագլուխ կերպով, առանց հաշվի առնելու պայմանագիրը համաստորագրող պետություններին, որոնք Թուրքիայի հետ միասին հիշատակվում էին նույն պարագրաֆում, միմիայն մահմեդական բնակչության շահերն էր արտահայտում, քանի որ Կարսի սանջակում մեծամասնություն կազմող հայ բնակիչները մյուս քրիստոնյաների հետ միասին իրենց բնակավայրերից քշվել են եւ զրկված են իրավական ճանապարհով իրենց կամքն արտահայտելուց, չնայած թուրքական զորքերի կողմից նվաճված երկրամասից նրանց փախուստն իսկ բավական էր նրանց կամքի արտահայտումը պարզորոշ դարձնելու համար: «Այն իրավունքների անունից,- նշված էր Խորհրդի բողոքագրում,- որոնք Բրեստի պայմանագրի հիման վրա հատկացվել են ամբողջ բնակչությանը, այլ ոչ միայն նրա մահմեդական մասին, Կարսի Հայոց ազգային խորհուրդը դիմում է Բրեստի պայմանագրում հիշատակված համաստորագրող տերությունների խղճին եւ խնդրում է նախ՝ հեռացնել թուրքական զավթիչ զորքերը, ինչպես նաեւ այն մահմեդական զանգվածներին, որոնք հարեւան տարածքներից այնտեղ են տեղափոխվել թուրքական կողմնորոշման համար ձայների մեծամասնություն ապահովելու նպատակով, եւ երկրորդ՝ ստեղծել պայմաններ, որոնք քրիստոնյա բնակչությանը վերադարձի եւ իր հայրենիքում հաստատվելու հնարավորություն կտան, որպեսզի նրանք ի վիճակի լինեն, համաձայն նույն պայմանագրի, անձամբ որոշել իրենց կառավարման ձեւը»[46]:

Այդ բողոքագիրը բնականաբար նույնպես դատապարտված էր դառնալու ձայն բարբառոյ յանապատի, առավել եւս այն բանից հետո, երբ գերմանական կառավարությունը փաստորեն հրաժարվել էր որեւէ պատասխանատվություն ստանձնել հայ ժողովրդի վիճակի առնչությամբ: Մոտենում էր աշունը, եւ եթե իրադրությունը շարունակեր նույնը մնալ, ապա սովի ու սառնամանիքի դեմ անպաշտպան բազմահազար հայ փախստականներն այլեւս չէին կարողանա գոյատեւել: Այս ծանր իրադրությունում Կոստանդնուպոլսում գտնվող հայկական պատվիրակությունը օգոստոսի վերջին դարձյալ հանդիպեց դեսպան Բեռնշտորֆին՝ նրան իր բողոքն արտահայտելով այն առնչությամբ, որ վրացական

46 "Deutschland und Armenien 1914-1918...", էջ 429: Վերջում Կարսի Հայոց ազգային խորհուրդը տեղեկացնում էր այդ առնչությամբ մի մանրամասն, պատմական, աշխարհագրական եւ էթնոգրաֆիական փվյալներով հագեցած հուշագիր գերմանական կառավարությանն ուղարկելու իր մտադրության մասին:

հանրապետությունը դաշնակից պետությունների կողմից արդեն պետք է ճանաչվեր, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունը՝ ոչ: Ինչպես տեղեկացնում էր դեսպանը արտգործնախարարության պետքարտուղարին ուղղված օգոստոսի 28-ի իր հեռագրով, պատվիրակները նշել էին, որ եթե Հայաստանը նույն կերպ ճանաչում չգտներ, ապա, այն, Ռուսաստանից միանգամայն կտրված լինելով, ամբողջովին կընկներ Թուրքիայի տիրապետության ներքո, եւ այդպիսով Գերմանիան հայերին խոստացված օգնությունը տրամադրելու փոխարեն մահացու հարված կհասցներ:

Հայ պատվիրակները նաեւ դեսպանին հարցրել էին, թե արդյոք արդեն չպե՞տք է վերադառնային, քանի որ համաժողով տեղի չէր ունենում, եւ վրաց պատվիրակները նույնպես վճռել էին վերադառնալ: Դեսպանը նրանց խորհուրդ է տալիս մի կարճ ժամանակ եւս մնալ, քանի որ իբրեւ թե առաջիկա օրերին պետք է կայացվեր այս կամ այն ուղղվածությունն ունեցող մի վերջնական որոշում: Ուշագրավ է, որ դեսպանը ստեղծված իրադրությունում հայերի համար միակ ելքը, ինչպես նախկինում, դարձյալ համարում էր Հայաստանի Հանրապետությունը Վրաստանին միացնելը: Հայ պատվիրակները, բավական երկար ընդդիմանալով, եւ, ամենայն հավանականությամբ, միայն այն պայմանով, որ այդ միացումը ժամանակավոր էր լինելու, ի վերջո համաձայնել էին: «Ընդհանուր առմամբ ես հայերին առկա իրավիճակում քիչ մխիթարություն կարողացա տալ,- գրում էր դեսպանը-: Նրանք որեւէ արժեք չեն տալիս փախստականների վերադարձին, քանի որ փաստացի իրադրությանը տեղյակ են եւ այդ պատճառով ստուգապես գիտեն, որ ոչ մի հայ չի վերադառնա այնտեղ, որտեղ իշխում են թուրքերը, այնպես, ինչպես ոչ մի մահմեդական իրավունք չի ունենա մնալ Հայաստանի Հանրապետությունում, եթե այն դառնա իրականություն: Երկար-բարակ խոսելուց հետո մենք եկանք համաձայնության՝ Զերդ Գերազանցությանը հետեւյալ առաջարկը ներկայացնելու համար, որը հայերի վերջին հույսն է: Վրաստանը մինչեւ այժմ դեռ չի ճանաչվել, այլ մենք միայն Ռուսաստանի համաձայնությունն ենք ձեռք բերել նրա ճանաչման համար: Վրաստանի սահմանները նույնպես դեռ ամրագրված չեն: Այդ պատճառով կարելի է խորհել, որ մենք վրացիներին որոշ պայմաններ առաջադրենք, նախքան նրանք կվայելեն իրենց տրվելիք արտակարգ արտոնությունները: Մենք հավանաբար կարող ենք պահանջել, որ փոքրիկ, այսպես կոչված Հայաստանի Հանրապետությունը ինչ-որ մի ժամանակավոր ձեւով միացվի Վրաստանին: Հայերը դրան պատրաստ են, քանի որ որեւէ ուրիշ հույս այլեւս չունեն: Թե արդյո՞ք վրացիները վերոնշյալ առաջարկին կհամաձայնեն, ես այստեղից չեմ կարող դատել, քանի որ Վրաստանի՝ այստեղի ներկայացուցիչների շարքում մեծ կշիռ ունեցող ոչ մի անձնավորություն չկա: Այդ մասին միայն Չխենկելին կարող է տեղեկություն տալ: Ես այստեղից նմանապես քիչ կարող եմ կռահել, թե Ռուսաստանը ինչպես կվերաբերվի այդ հարցին: Հայերն ինձ ասացին, որ Ռուսաստանը չի ուզում ճանաչել այժմյան Հայաստանի Հանրապետությունը, քանի որ դրանով միաժամանակ կվավերացվի Հայաստանի անդամահատումը: Դա, սակայն, ես բավականաչափ հիմք չեմ համարում, քանի որ կարիք չկա հայերի մնացորդը ոչնչացնել միայն մի սկզբունքի պատճառով, որը չի կարող իրագործվել: Վերջապես, ինչ վերաբերում է թուրքերին, ապա ես կարող եմ վկայակոչել իմ նախկին տեղեկությունները, ըստ որոնց այստեղի կառավարությունը բացառիկ

նշանակություն է տալիս սահմանային կարգավորումներին եւ Կովկասի մահմեդականների հետ իր կապերին, որոնց նա պարզապես թուրքեր է անվանում»[47]:

Հատկանշական է, որ Բեռնշտորֆը, որը մեծ դերակատարում էր ունեցել անցած ժամանակամիջոցում գերմանական կառավարությանը հայանպաստ գործուն միջամտություններից եր պահելու հարցում, հայ ժողովրդին օգնելու Գերմանիայի հնարավորությունները վերը նշվածով արդեն սպառված էր համարում եւ խորհուրդ էր տալիս կառավարությանը թողնելով այդ եւ կովկասյան այլ հարցերում Թուրքիայի հետ ունեցած տարակարծությունները, թուրքերի եւ Ադրբեջանի մահմեդականների հետ համաձայնության գալով՝ նախաձեռնել Բաքվի գրավումը[48], քանի որ այլապես Գերմանիան կզրկվեր Բաքվի նավթից եւ կարեւոր ճանապարհներից[49]:

Ինչեւէ, չնայած այն հետեւողական ջանքերին, որ գործադրում էին Հայաստանի Հանրապետության կառավարությունը եւ Թիֆլիսում Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ ֆոն Կրեսը խիստ ծանր դրության մեջ գտնվող հայերի համար Գերմանիայի աջակցությունն ապահովելու նպատակով, պաշտոնական Գերմանիան 1918 թ. օգոստոսին եւս նախընտրեց հետեւել այդ հարցում չեզոքություն պահպանելու եւ ըստ հնարավորին պատասխանատվությունն իրենից վանելու իր ավանդական քաղաքականությանը՝ լավագույն դեպքում հանդես գալով միայն Բ. Դռանն ուղղված ամուլ նախազգուշացումներով եւ հորդորներով. հանգամանք, որից հմտորեն օգտվում էր թուրքական կառավարությունը:

---

47 Die Armenische Frage..., էջ 576-577:

48 Բաքվի հետ կապված համալիր ռազմական գործողությունների ընթացքին իրազեկվելու համար տե՛ս **Մ. Ս. Կարապետյան**, նշվ. աշխ., Երեւան, 2003, էջ 241-246:

49 «Քանի որ անգլիացիները շարունակ ամրապնդվում են Բաքվում,- այդ առթիվ գրում էր նա,- ես համոզված եմ, որ մենք շուտով, չնայած այն ամենին, ինչ մինչեւ հիմա տեղի է ունեցել, ռազմական դրդապատճառներով պետք է Թուրքիայի եւ Ադրբեջանի մահմեդականների հետ համաձայնության գանք՝ միասին Բաքվի վրա հարձակվելու համար: Այլապես մենք նավթին չենք տիրանա, իսկ ճանապարհը դեպի Պարսկաստան, Թուրքեստան եւ այլն կփակվի»: Դեսպանը համենայն դեպս ամենանպաստավոր տարբերակը համարում էր այն, որ Գերմանիան ռուսական կառավարությունից Բաքուն գրավելու մանդատ ձեռք բերեր՝ դա հիմնավորելի համարելով նաեւ այն պատճառաբանությամբ, որ Բաքվի խորհուրդը իբր թե ընկել էր անգլիացիների ազդեցության տակ եւ այլեւս չէր առաջնորդվում Մոսկվայի ցանկություններով: Ամեն դեպքում, ըստ նրա, Բաքվի գրավումը հույժ անհրաժեշտ էր, եւ նա կառավարությանը կոչ էր անում հնարավորին չափ արագ նշանակալից ռազմական ուժեր, առանձնապես ծանր հրետանի տրամադրել գեներալ ֆոն Կրեսին, քանի որ, մի հրանոթային մարտկոցով այդ հարցում ոչինչ հնարավոր չէր անել: Անդ, էջ 577-578: Ինքնին հասկանալի է, որ Բեռնշտորֆի այս տեսակետը նույնպես միանգամայն թուրքական շահերից էր բխում, եւ նա այդ առնչությամբ պետք է դրդումներ ստացած լիներ նաեւ թուրքական կառավարությունից: